

ԹՈՒՐԲԻԱՆ ՓՈՐՉՈՒՄ Է ՍՓԻՌՔԻ ՀԵՏ ԵՐԿԻՍՈՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՆՔ ՍՏԵՂԾԵԼ

Հայաստանի Ռաճկավար Ազատական Կուսակցության (ՀՈԱԿ) պաշտոնաթերթ «Ազգ»-ի ստորին տրուած յօդուածը իր շահեկանութեան եւ իրատեսութեան համար կու տանք ամբողջութեամբ, նաեւ առանց արեւմտահայերէնի վերածելու:

Մինչ թուրքական հանրային հեռուստատեսութիւնը Հայոց Յեղասպանութիւնը խեղափոխելու պետական առաջադրանքով շարունակում էր «Սարի աղջիկ» բազմասերիանց ֆիլմի ցուցադրումն ու ազգային կրթութեան նախարարութիւնը «Թուրքերի նկատմամբ հայերի իրագործած ցեղասպանութիւնը» թեմայով երկրի կրթօճակներում շարունակելու հարցը կազմակերպում էր զա պարտադրում էր նաեւ Պոլսոյ հայկական վարժարաններին, որպէսզի հայ ազգային ինքնութեան հետ թշնամացնի թուրքահայ դպրոցականներին, յանկարծ թուրքիայի արտգործնախարար Ապտիլլա Կիլ Հայաստանի հետ յարաբերութիւնների բարելաման պատրաստակամութիւն յայտնեց:

Որքան էլ պատրաստակամութիւնը պայմանաւորուի «պահանջատիրութիւնից պաշտօնապէս հրաժարուելու» պահանջով եւ դրա կատարումն անհնար լինի հայկական իշխանութիւնների համար, այնուամենայնիւ, Հայաստանի հետ մերձեցման Կրիլի ստեղծած պատրաստութեամբ նպատակին: Դրան նպաստեց շահագրգիռ միջազգային ուժերին ընդառնադ զմանուր, այդ թում՝ հայաստանեան: Այսպիսով հայ-թուրքական յարաբերութիւններում առաջընթացի տպաւորութիւն ստեղծուեց:

Այլ կերպ, Կրիլի պատրաստակամութեան պատրաստութեամբ վերածուեց առաջընթացի տպաւորութեան: Յունիսի 3ին Մատրիտում ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանեանի հետ վերջինի հանդիպմամբ դա խորացաւ: Առաջընթացի տպաւորութեան խորացումը նպաստաւոր պայմաններ ստեղծեց ամերիկահայ կազմակերպութիւնների հետ երկխօսութիւնի հաստատելու ՄՄՆում թուրքիայի դեսպանատան նախաձեռնութեան համար: «Հայ - Թուրքական Հարաբերութեան Զանգուտ»-ի հայ անդամները, յայտարարելով սթանդարտի նիստում առաջացած «լաւ մթնոլորտի» մասին, հիմնադրեցին նախաձեռնութեան անհրաժեշտութիւնը:

Խօսքը տուեալ դէպքում թուրքիայի արտգործնախարարութեան հետախույութեան եւ հետպաշտութիւնների բաժանմունքից ԷՃԷԻԹ Թեյզանի մասին է: Թուրքական իշխանութիւնները Հայաստանի եւ հայ - թուրքական յարաբերութիւնների ապագայի մասին Սփիւռքի տեսակէտներին ծանօթանալու համար նրան լիպօրում են, իսկ ՄՄՆում թուրքական դեսպանատունը հայկական կազմակերպութիւններին առաջարկում է հանդիպել նրա հետ:

Թուրք - ամերիկեան տարաձայնութիւնների ներկայ փուլում Հայաստանի հետ իբր յարաբերութիւնների բարելաման, ինչպէս նաեւ Սփիւռքի հետ աշխատելու կոչումով երկխօսութեան հաստատման այս երկու նախաձեռնութիւնները թուրքիայի համար միանգամայն շահեկան են: Այն առումով, որ նախաձեռնութիւնների դրական արձագանքի դէպքում, անկախ դրանց պատրաստման բնույթից, դրանք ուժի մէջ էին մնալու, ընդ որում՝ որպէս թուրքիայի բարի կամքի դրսեւորում: Թէեւ նախաձեռնութիւնների բացասական արձագանքը յանգեցնելու էր դրանց ձախողմանը, սակայն ձախողման պատասխանատուութիւնը ընկնելու էր Հայաստանի եւ Սփիւռքի վրայ: Այս պայմաններում, ինչ խօսք, Հայաստանը դառնալու է հայ - թուրքական յարաբերութիւնների կարգաւորման համար գործադրող ամերիկեան ճնշումների թիրախը:

Որե՞մն, թուրքական վերոյիշեալ նախաձեռնութիւնները չափապանց հաջուենկատ էին: Դա ենթադրում էր արձագանքի հաշտեցնողութիւնը, ինչն առաջին հերթին վերաբերում էր հայկական կազմակերպութիւններին, որովհետեւ Թեյզանը թուրքական պետութեան ներկայացուցիչն էր, այդ իսկ պատճառով նրա հետ ամէն մի հանդիպում ընկալելու էր Սփիւռքի հետ երկխօսութիւն հաստատելու թուրքիայի պատրաստակամութեան ընդառաջում, ինչը համադրուելու էր Հայաստանի հետ յարաբերութիւնների բարելաման Կրիլի պատրաստակամութեան հետ:

Աւելին, քանի որ հանդիպման նպատակը ինչպէս բարելաման դէպքում, երկխօսութիւնը չէր, այլ երկխօսութեան պատրաստի ստեղծումը, ուստի թուրքիայի համար ամենէին կարեւոր չէր, թէ Թեյզանին քանի՞ կազմակերպութիւն կ'ընդունի, կամ ինչի՞ կը յանգեցնեն նրա հանդիպումները: Բայց որ դրանք լուրջ վնաս էին հասցնելու Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին՝ ակնյայտ էր: Միաժամանակ թուրքերին տալով յաւելելի լծակ, նրանց հետ բանակցութիւններով կաշկանդելու էր հայկական կողմին:

Որքան էլ դա պայմանաւորուի Հայոց Յեղասպանութիւնը չճանաչելով հանդերձ որպէս սպառնալիկ թուրքիայի դէմ օգտագործելու պաշտօնական Ուաշինկթընի հետ նկատարումներով, այնուամենայնիւ, Հայ Դատի Զանձնախումբը Թեյզանի հետ հանդիպման առաջարկը միանգամայն իրաւացիօրէն կտրականապէս մերժեց: Միաժամանակ նա հայկական կազմակերպութիւնների կողմէն չընկնելու թուրքերու նոր ծուղակը:

Հակառակ դրան, Թեյզանի հետ հանդիպման պատրաստակամութիւն յայտնեց Ամերիկայի Հայկական Համագումարը: Թերեւս դա կարելի էր պայմանաւորել ՄՄՆի Պետքարտուղարութեանը ծառայութիւն մատուցելու պատրաստութեամբ, եթէ համագումարը չձուռնար, որ հանդիպման առաջարկը թուրքական կողմն է արել, ուստի նա էլ պէտք է յայտնի, թէ Թեյզանին ինչ նպատակ է հետապնդում, նրան որ հարցերն են հետաքրքրում եւ ինչպիսին են դրանց նկատմամբ թուրքիայի մօտեցումները: Համագումարը, սակայն, ոչ միայն մոռացաւ, այլեւ առաջ անցնելով թուրքերից, ինքն առաջարկեց հանդիպման օրակարգում ընդգրկել Հայոց Յեղասպանութեան ճանաչման, Հայաստանի եւ թուրքիայի դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման, սահմանների վերաբացման, դարաբաշտեան հիմնահարցի խաղաղ կարգաւորման եւ թուրքահայ համայնքի իրաւունքների հարցը, ընդ որում նախապայտուցներով: «Այլապէս մենք մերժում ենք հանդիպումը»:

Ինչն է, որպէսզի պատրաստ ստեղծուի, թէ հանդիպման համար թուրքական կողմին նախապայմաններ է առաջարկում: Մինչդէռ թուրքական պետութիւնը Թեյզանին հենց այդ հարցերի շուրջ ՄՄՆի հայկական կազմակերպութիւններում տիրող կարծիքները ճշդելու եւ քննարկումներին Սփիւռքի հետ թուրքիայի երկխօսութեան բնույթ հարողելու առաջադրանքով էլ լիպօրէ: Յատկանշական է, որ Թեյզանը յայտարարելով հանդերձ, թէ «երկխօսութեան հիմքում չպէտք է դրուեն ինչ - ինչ նախապայմաններ, սիրաջօծար հանդիպում է համագումարի ներկայացուցիչների հետ»:

Այլ կերպ, Թեյզանը խիտեր, որ օրակարգում քննարկման դրոնող խնդիրները չեն կարող նախապայման լինել, եւ դրանք որպէս այդպիսին ներկայացնելու համագումարի փորձերով ակնատես եղաւ ճշդ մտածողութեանը: Այդ առումով ակնյայտ էր, որ Թեյզանի հետ ՄՄՆում թուրքիայի ներկայացուցչութիւնում հանդիպելու առաջարկի ընդունումը: Ակնյայտ է, որ երբ հանդիպման վայրը ընտրում է առաջարկող կողմը, ապա հանդիպումը վերածուում է ընդունելութեան: Այդ ընթացքում հանդիպման առաջարկն ինքնաբերաբար դառնում է հրաւեր:

Որե՞մն Ամերիկայի Հայկական Համագումարը, հանդիպելով Թեյզանի հետ թուրքական ներկայացուցչութիւնում, ընդառաջել է իրաւերին, թերեւս դրանով էլ նպաստել Սփիւռքի հետ երկխօսութիւն հաստատելու ՄՄՆում թուրքիայի դեսպանատան նախաձեռնութեանը: Յաւան, դրան ընդառաջեց նաեւ Ռաճկավար Ազատական Կուսակցութեան Արեւելեան շրջանի վարչութիւնը: Ինչ վերաբերում է Թեյզանի հետ վերջիններին հանդիպումների հնարաւոր հետեւանքներին, ապա դա առանձին խնդիր է եւ մասնաւոր մօտեցում է պահանջում:

ՅԱԿՈՒ ԶԱԳՐԵԱՆ

السيف | النجم | الزمان | المستقبل | الأثر

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲՐԱՐՆԵՆՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Լիբրանեան թերթերը երկ գլխաւորաբար լուսարձակի տակ առած են նախարարաց խորհուրդի փառն ու անոր ընթացքին տիրած մթնոլորտը:

«Լիուս» նշած է, թէ նախարարաց խորհուրդի 7 ժամ տեւած մարտն ունեւր ընթացքին վաւերացուեցան «փշոտ» հարցերը, բացի տեղեկատուութեան թղթածրարէն: Կառավարութիւնը ինքիւր փրկեց գործակցութեան ընտրանքին կառչելու քայլին շնորհիւ:

«Տիար» համաձայն, նախարարաց խորհուրդի նիստը յատկանշուեցաւ իր հանդարտութեամբ, դրսեւորելով իշխանութեան միանշանկութիւնը: Սուրիական իրատր ազդու էր եւ յաջողեցաւ մթնոլորտը բարելաւել եւ դրական արդիւնքներու դուռ բանալ:

Լուս «Պայրաք»-ի, նախագահ Լահուտ յոյս յայտնեց, որ խաղաղութեան քառեակը յաջողի դէմ դնել իսրայէլեան մերժումին: Նախարարաց խորհուրդը շրջանցեց քննարկներ եւ վաւերացուց «փշոտ» հարցերու մէջ բաժնը:

«Քիֆահ Արապի» դիտել տուած է, թէ նախարարաց խորհուրդը վաւերացուց քիշայի միտքերը հսկողութեան ենթարկելու վերաբերեալ օրինակները եւ մերժեց քննարկել տեղեկատուութեան թղթածրարները:

«Նահար» նշած է, թէ նախարարաց խորհուրդը կարծի կեցուածք կը ցուցարբէ տեղեկատուութեան թղթածրարին նկատմամբ եւ կը յետաձգէ պետական կառուցելու թղթածրարին քննարկումը եւ քուէարկութիւն կը կատարէ ընդհանուր ապահովութեան նշանակումներուն առնչութեամբ:

Դրական անակկար հանդիպում 7 ժամուան մէջ ըլլաւ առկայ հարցերուն լուծումը: «Սաֆիր» համաձայն, նախարարները կը վերականգնեն իրենց կառոյցին նկատմամբ յարգանքն ու վստահութիւնը: Սուրիայի փորակութեամբ: Տարակարծութիւններ յառաջացրեալ թղթածրարներու պարագային Լահուտաւելի կէտ ապահովեց, քան Հարիրի:

Շրջանային ու միջազգային յուրերու կարգին առաջնահերթ տեղ գրաւած են պաղեստինեան տագնապի լուծման համար տարուող աշխատանքները եւ շարունակուող բնաւարքները:

Լուս «Քիֆահ Արապի»-ի, Ապու Մապէն Համապի եւ ժիհատի կ'առաջարկէ փնտրել հաստատել եւ մասնակցութիւն բերել Ազգային կառավարութեան:

«Տիար» գրած է, թէ Վուլֆ հանդիպում ունեցաւ Ապու Մապէնի հետ եւ իսրայէլեան պաղեստինեան խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան քաշուելու տարբերակին շուրջ:

«Պայրաք» դիտել տուած է, թէ տեղեկութիւններ շրջան կ'ընեն Մարուան Պարոտիի պատարձակման մասին:

Միացեալ Նահանգներ յաւելեալ ճիգ կը թափեն ի խնդիր փնտրելու հաստատման, Վուլֆ տեսակցեցաւ Ապու Մապէնի հետ, իսկ Փաուրլի Իսրայէլ կ'այցելէ Ռուբաթ օր, նշած է օրաթերթը:

Լուս «Լիուս»-ի, Ապապի եւ 13 կազմակերպութիւններու միջեւ տար հանդիպումին նախորդեց պաղեստինցի վարչապետին եւ Վուլֆի միջեւ կայացած տեսակցութիւնը: «Համա» կ'ունեւնաւորէ փնտրելու հաստատման խնդիրը, իսկ արմատական կազմակերպութիւնները կը քննեն կառավարութեան մաս կազմելու կարելիութիւնները:

Թերթը նշած է, թէ Փաուրլի Ռուբաթ օր Իսրայէլ կ'այցելէ, իսկ պաղեստինցիները կը պատրաստուին Կապայի ապահովութիւնը ստանձնելու:

«Նահար» նշած է, թէ Այրյորդանանի մէջ խաչակցի մը սպանութեամբ եւ երկու ուրիշներ վիրաւորուեցան: Ապապի չկրցաւ արմատականները համոզել փնտրելու հաստատելու առնչութեամբ, իսկ Ուաշինկթըն կը բազմացնէ իր ճիգերը խաղաղութեան քարտէսը փրկելու համար:

Իրաքի մէջ իրադարձութիւններուն ակնարկելով «Նահար» գրած է, թէ Իրաքի մէջ ամերիկացի փնտրումը սպանութեամբ, իսկ զաշնակից ուժերը ձեռնարկեցին:

400 իրաքցիներ: Իրաքեան անձանօթ իմրակցութիւն մը որդեգրեց վերջերս կատարուած յարձակումներուն պատասխանատուութիւնը, յայտարարելով, որ Սատանն ու անոր համակրները հայրենիքը կորսնցնող թշնամիներ են:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Բրիտանիա 4 տարիով կ'երկարաձգէ իրաքեան բնագրաւումը, իսկ «Անապատի Կարի» գործողութեամբ կը ձեռնարկուին 400 իրաքցիներ:

«Պայրաք» դիտել տուած է, թէ Պրեմըր կը հաստատէ, որ Պասաականներու դատավարութիւնը կը շարունակուի, եւ ընտրութիւններու մասին խօսիլը կանուխ է:

Լուս «Լիուս»-ի, Ֆարուսի ամերիկեան ուժերու կեդրոնատեղիին դէմ յարձակում մը կատարուեցաւ, իսկ Պաղտաւոր մէջ ամերիկացի փնտրումը սպանութեամբ:

Այլ յուրերու կարգին «Նահար» գրած է, թէ Ֆրանսայի իշխանութիւնները ձեռնարկեցին իրաքեան «Մուժահիդին իսլամ» շարժումին անդամներէ: Իրան ողջունեց այս քայլը, իսկ Ամերիկա արտախաչեց իր գոհունակութիւնը:

Լուս թերթին, Յորդանանի խորհրդարանական ընտրութիւններու նախնական տուեալներուն հիմամբ յայտարարեց յաջողութեամբ յառաջարկուած են, իսկ ցեղախումբերը տիրական ուժերն են:

«Քիֆահ Արապի» նշած է, որ Սաշինկթընը կը հերքէ, թէ ինք կը իրաւունք ձեռնարկուի կը կատարէ Իրանի վարչապար խաղաղօրէն բարեփոխելու մասին:

«Պայրաք»-ի համաձայն, Ֆահտ քաղաւոր շտրիակայական հեռագիր մը յղեց Մարիտանիոյ նախագահին, վերջինի կողմէ երկրին մէջ լեղաշրջումի փորձերը հակակշռելու առիթով:

«Սաֆիր» դիտել տուած է, թէ իրանցի երեսփոխաններ կը դատապարտեն Ամերիկան երկրին ներքին կեանքին միջամտելու ըլլալու յանցանքով: Փաուրլի կը քաջալերէ ցուցարարները, իսկ Սթրո վերապահ կը մնայ:

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն: 258526, 260115 եւ 241274:

Հ.Յ.Ղ. ԼԻԲՐԱՐՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՌՌԹԻՆ

30 ԱՍԵՄԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կը բանախօսեն՝ ԸՆԿ. ՅԱԿՈՒ ԶԱԳՐԱՏՈՒՆ Գ.Յ.Ղ. Լիբրանի Կ.Կ.Ի անդամ

ԸՆԿ. ԱԼՊԵՐԹ ԱՃԵՄԵԱՆ Գ.Յ.Ղ. Բիրոյի անդամ

• Գեղարուեստական Յայրագիր

Տեղի կ'ունենայ Երեւանի 24 Յունիս 2003ի երկօրեայ ժամը 8:00ին. Յակոբ Տէր Մկրտչեանի հանդիսարանին մէջ:

ՀՐԱԲԵՐ

AIR-KOOL air-conditioning

Be COOL with AIR-KOOL

THE SUPER SILENT BRAND NEW HEAT-PUMP A/C WITH WARRANTY Starting 250\$

Sole Agent: G. Ayanian & Sons

Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmayzé, (01)447000-445396 - (03)627728/9 Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb www.ayanian.com

ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՄՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

Հայկական վարժարաններու հանդեսները, ամսվերջի հանդես քե այլ առիթներու նուիրուած, կ'արտացոլացնեն ներքին մթնոլորտը հայ վարժարանին: Հոն տիրողը ազգային շունչն է, հայտնորդ մթնոլորտով, որ ինքնին հայկերտուածի կ'առաջնորդէ: Կը բաւէ ներկայ ըլլալ հայկական որեւէ աշակերտական հանդիսութեան, անձամբ կը համոզուիք այս նշանաբանը, եւ ձեր սրտերը կը լեցուի հաւատքով, հայուն ապագային հեռանկարով:

Մեր կարգին այս իրողութիւնը ուրախութեամբ հաստատեցինք անգամ մը եւս՝ ի տես ազգային վարժարանի մը տնօրէնութեան կազմակերպած ամսվերջի հանդիսութեան մը ընթացքին ներկայացուած հայտնորդ յայտագրիին:

Հայտնորդի նուիրուած էր թեման, Կիրակի, 15 Յունիս 2003ի հանդիսութեան, որ բացուեցաւ հայոց այրուեցիկի նուիրուած խօսք ու երգով: Եղանակով Այբ, Բեն, Գիմ արտասանելը արդէն իսկ «գոց սորված» կը նշանակէ հայոց 36 տառերը, որոնք հեղինակը՝ Մեսրոպ Մաշտոց կը փառաւորուի մանկաց շրջաններով:

Կը յաջորդեն հայերէն լեզուի նուիրուած բանաստեղծութիւնները, փունջ-փունջ կազմուած, հերթով արտասանուած: Խաչատուր Աբովեանէն մինչեւ Սիւլիկ, Պարոյր Սեւակէն ու Սիամանթոն մինչեւ Մուշեղ Իշխան եւ Սիլվա Կապուտիկեան, հաւատարմ կերպով ներբողուած բերբուսներ, որոնք մեր մանուկ ու պարման ծաղկուն սերունդին իբրեւ ներշնչարան՝ պիտի մնան անմոռանալի ու անկորնչելի գանձեր, երգեր, փոխանցելի սերունդէ սերունդ:

Յունիս ամսուան երկրորդ կեսին սկսեալ այս միեւնոյն մթնոլորտը կը տիրէ հայկական բոլոր վարժարաններուն մէջ, իւրաքանչիւրը՝ իր ձեւով, ուրոյն մ'օտեցունով արտայայտուած: Հայկական վարժարաններու սրահները եւ այլ հանդիսարանները գրաւուած են այս օրերուն, ուր կը հրատարակուի «Ղեկավար» վկայագրուող համալուկատարուած աշխատանքին, թափուած քրտինքին, հեւքին ու տագնապին, վասն փրկութեան հայուն լինելութեան:

Նման սրտառու է եւ յուզիչ պահերուն կը տարուի մտածելու այն միւս քանակին մասին, որ զրկուեցաւ հայկերտուածի իր իրաւունքին: Ծնողներ ինքնակամ զրկեցին զանոնք, ու մեղք, որ մեր նորածնակ ծիւրը չկրցան հաղորդուիլ:

Մեսրոպին ու Մասիսին, պիտի չկրնան կրկնել Այբ, Բեն, Գիմ, պիտի չկրնան սորվիլ անունը Մուշեղ Իշխանին, որ կտակեց որդւոց որդի, թէ՛ «Հայ լեզուն տունն է հայուն»:

Աշխարհի չորս ծագելունը:

Հանդիսակցները, մեծ մասամբ ծնողք եւ աշակերտներուն հարազատներ, ուրախութեամբ հետեւեցան յայտագրիին, ցնծութեամբ հաստատեցին, թէ իրենց զաւակները ընկալած են հայուն շունչն ու ոգին, թրծուած են հայկական մշակոյթով, երգ ու պարով, հայոց լեզուի իւրախատուկ գեղեցկութեամբ:

Նոյն ատեն խոր ափսոսանք մը ցարցուց մեր սրտերը՝ միւս բացակայներուն ի խնդիր: Մեր հարազատ գաւակներէն մեծ թիւ մը չձանօթացաւ Մասիսին, Սեւակին, Արագածին ու Մեսրոպ Մաշտոցին:

Հարկ է շնորհաւորական երկու խօսք ըսել մեր բոլոր վարժարաններուն տնօրէններուն, ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որոնք այսքան դժուար օրերուն տոկացի տնտեսական տագնապին ստեղծած բոլոր զրկանքներուն, սիրաշօթար հետեւեցան իրենց վստահուած հայկերտուածի աշխատանքին:

Ազգային Ուսումնական Խորհուրդին կողմէ հռչակուած «Ազգային վարժարաններու տարի»-ն փակուեցաւ գոհունակութեամբ, շնորհիւ տրմաշան աշխատանքներուն՝ հոգաբարձութեանց, խնամակալութեանց, բաղակալ խորհուրդներու, ծնողական խորհուրդներու, բարեսիրական հաստատութիւններու, հայրենակցական միութիւններու:

Բոլորին վարձքը կատար:

ԱՄՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ

Ազգային Արգարեան վարժարանի ամսվերջի հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 15 Յունիս 2003ին, Կէսօրէ առաջ ժամը 11:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, հովանաւորութեամբ Լիբանանի թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի, ի ներկայութեան Ազգային Ուսումնական Խորհուրդի ներկայացուցիչին, Ս. Աստուածածին եկեղեցու թատերակազմին, վարժարանի հոգաբարձութեան եւ մեծ թիւով հրաւիրեալներու ու ծնողներու:



Հանդէսին հիմնական նիւթը՝ «Հայ դպրոց»ն էր: Վարժարանին Գ. կարգի աշակերտներէն՝ Փաթիլ Տէտեան, իբրեւ հաղորդավարը «Հայուր եւ կամուրջ» յայտագրին՝ եկած էր Արգարեան վարժարան, պատրաստելու համար հաղորդաշար մը, ներկայացնելու «Հայ Լեզուն տունն է հայուն աշխարհի չորս ծագելուն»:

Յայտագիրը սկսաւ «Այբուբեն»ի դասարանով ու մանկապարտէզի աշակերտները յաջորդաբար ներկայացուցին այբուբենի տառերը, համապատասխան արտասանութիւններով, պարբերաբար նուիրուած հարցերով:

Ս. Աստուածածին եկեղեցու թատերակազմի վարժարանի հոգաբարձուհի Գեղամեանը յայտագրին մէջ իր արտասանութեամբ հարցերով հարցազրուեցաւ հայուր եւ կամուրջի մասին:

Ս. Աստուածածին եկեղեցու թատերակազմի վարժարանի հոգաբարձուհի Գեղամեանը յայտագրին մէջ իր արտասանութեամբ հարցերով հարցազրուեցաւ հայուր եւ կամուրջի մասին:

Վարժարանի տնօրէնուհի Գեղամեանը յայտագրին մէջ իր արտասանութեամբ հարցերով հարցազրուեցաւ հայուր եւ կամուրջի մասին:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԻՋԱՄԱՍՆԱՐԱՆԱԿԱՆ ՄՐՅԱՆԸ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ ՍԱԹԵՆԻԿ ԱՂԱՍԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ



Պէջուրով մէջ Ռուսական Մշակութային Կեդրոնին կազմակերպած գեղանկարչութեան միջազգային մրցանակի մրցանակաւորները իրենց ստեղծագործութիւնները ներկայացուցին Մ. Փեթրոսյանի քաղաքի 300ամեակին նուիրուած ձեռնարկի մը ընթացքին: 26 մրցակիցներու մէջ առաջին դիրքը զբաւած Սաթենիկ Աղասեան, որ

Սրբանքին մասնակցող ուսանողներուն գեղանկարչութեան մրցանակաւորները իրենց ստեղծագործութիւնները ներկայացուցին Մ. Փեթրոսյանի քաղաքի 300ամեակին նուիրուած ձեռնարկի մը ընթացքին: 26 մրցակիցներու մէջ առաջին դիրքը զբաւած Սաթենիկ Աղասեան, որ

հոգեբանութեան ուսանողուհի է Հայկական համալսարանի մէջ, իր մրցանակը (մէկ շաբթուան շրջապատով) ստացաւ Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպանի Պրոքոր Պրոքորին:

Advertisement for Orient Plus travel agency, featuring a woman and the text 'Touch New Worlds', 'Jarna \$319', and contact information.

Advertisement for www.aztagdaily.com, featuring a large URL and the text 'www.aztagdaily.com'.

Advertisement for 'ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ' (Information and Directory), featuring the text '«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի բնագիրը ընթանալի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ» ծանուցումներու գրասենեակը:

ՍՈՒՐԻՆ ԳԱՆԳԱՏԸ

Ինչպէս հոս հասաւ, կամ հասցուցին զիս: Այս ինչ քաջութիւնը օրի հասանք, ժամանակին ըսեր է հայ մեծ բանաստեղծ մը: Բոլորէն աւելի, ինծի՛ կը պատշաճի այս խօսքը:

Ես՝ սուրս, պատմութիւն կերտած գէնք, հո՞ս պիտի հասնէի: Ես, որ կայսրութիւններ կերտած եմ. ես, որ կայսրութիւններ վար բերած եմ, ինչ եմ այսօր: Ինչի՞ վերածած է զիս այս ապերախ մարդկութիւնը: Աւա՛ղ փառացս, որոնք անցեալ են այլեւս:

Իսկ հիմա ինչպէս տանիլ այնքան անպատուութիւն, երբ պարզապէս միայն կարկանդակ կտրելու պարտականութիւնը վերապահած են ինծի: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ... Պատմութեան ծագումին հետ իսկ, ես էի, որ ամրակուեցան ձեռքերն մէջ գէնք դարձաւ: Նոյնիսկ անկէ առաջ, մարդկութեան ծագումին հետ իսկ, ես էի, որ մարդկութեան սնունդը եւ ինքնապաշտպանութիւնը կը հայթայթէի:

Երկարատեղ կը պարտին իրենց կառուցած հսկայ բուրգերուն եւ տաճարներուն, բնա՛ւ մտահան պէտք է ընել, որ առանց սուրի մէկ շաբաթ իսկ չէին կրնար բազմած մնալ իրենց գահին վրայ:

Մեծն Աղեքսանդր, աշխարհի հիացումին արժանացած փառաւոր արքան, այնքան երիտասարդ տարիքին հին աշխարհը նուաճեց սուր ի ձեռին: Գորգեան հանգոյցը քակեց վեր բարձրացնելով զիս եւ հարուածելով այդ անելը: Ատով նոյնքան հռչակ վայելեց, որքան որ իր նուաճումներով կրցաւ հռչակաւոր դառնալ:

Ասորական, բարեկական, պարսկական կայսրութիւններ եկան ու անցան: Ես բերի զիրենք եւ ես ալ տարի: Ան, որ աւելի պինդ եւ ամուր բռնեց զիս, կրցաւ նուաճել զիմացիները:

«Մահման քաջաց, գէնն իւրեանց» երբ կ'ըսէր հայոց Արտաշէս աշխարհակալ թագաւորը, զիս է, որ վեր բարձրացուցած էր: Եւ ես իր սահմանները հասցուցի աշխարհակալութեան աստիճանին:

Տիրան Բ. կրցաւ հայկական կայսրութիւնը հաստատել, ամբողջ Միջին Արեւելքը նուաճել, դարձեալ շնորհիւ ինծի: Իսկ երբ յողեցեալ զիս վեր բռնեց, աւաղ, փուր կեաւ իր կայսրութիւնը:

Հոռոմի կայսրութեան լեզուները ինչ կրնային ընել առանց ինծի: Ես այդ փոքր հանրապետութիւնը վերածեցի հսկայական կայսրութեան, աշխարհի բացարձակ տիրութիւնը իրեն պահեցի դարերով: Իսկ հոռոմացի լեզուները իրենք զիս վար զրին պարզապէս աւար են ոսկի խլելու համար իրարու ձեռքերէն, տապալեցաւ փառահեղ կայսրութիւնը:

Երբ արաբները լաւ ձեւով վերցուցին զիս, իրենց ապահովեցի Միջերկրականի աւազանին մեծ մասը: Բայց ասոնք եւս երբ զիս իրարու դէմ վերցուցին, թոյլ տուի, որ ինչնայ:

Չիս դաւադրութեան համար գործածողներէն անպայմանօրէն օր մը վրէժխնդիր կ'ըլլամ: Չեմ սիրեր, որ անպատիւ մարդիկ զիս վերցնեն եւ իրենց հարազատներու դէմ գործեն:

Ափսո՛ս, բի՛ւր ափսոս, որ բարբարոս սելճուքներ, մոնկոյներ եւ թուրքեր գիտցան գործածել զիս եւ նուաճել հին աշխարհի մեծագոյն մասը. հասան մինչեւ Եւրոպայի սիրտը: Ինչ կրնային ընել, երբ անոնց դէմ գոտուող ազգեր թոյլ տուին, որ ժանգոտէի եւ կամ յոգնած ձեռքերով վեր բարձրացուէի: Թուրանական ցեղերը իրենք զիս լաւ ձեւով բարձրացուցին. ինչ մեղք ունէի ես:

Բոլորմպոս եւ իր հետեւորդները, առանց սուր գործածելու, կրնային նուաճել նոր աշխարհներ: Ես էի, որ բոլոր նուաճողներուն առջեւն կը վերցնէի ամէն տեսակի խոչընդոտ:

Առանց սուրի Անգլիան ինչպէս կրնար նուաճել հսկայական կայսրութիւն մը, որուն վերեւ աբել չէր համարձակել մար մտնել: Մարդ արարածը հնարեց հրացանն ու վառօդը... Եւ այն օրէն սկսեալ հետզհետէ սկսայ համեստանալ եւ ընկրկիլ: Հրացանը, օ՛ այդ դաւադիր գէնքը, որ հեռուէն մարդիկ իրարու դէմ կը հանէ: Ես՝ սուրս, որքան ազնիւ էի, երբ մարդ մարդու դէմ կը հանէի: Մարդիկ իրարու աչքերուն մէջ նայելով, հոգ չէ թէ գոռուով եւ հայհոյելով, իրարու դէմ կը պայքարէին: Մարդը մարդուն դէմ կ'ելլէր, եւ ես յաղթանակը կը շնորհէի անոր, որ զիս ամուր ձեւով կը վերցնէր:

Ժամանակի ընթացքին հրացանին յաջորդեցին թնդանօթը, ճրթիւրը: Մարդկային պատիւը ոտնակոխ եղաւ, երբ այդ դաւադիր գէնքերը հսկայ տարածութեան վրայ սկսան աւերել քաղաքներ, երկիրներ: Ռազմիկ թէ խաղաղ ժողովուրդ, առանց խտրութեան, հաւաքաբար այս դաւադիր գէնքերուն գոհ գացին: Մինչեւ իմ օրովս, ռազմիկներն էին, արիւններն էին, որոնք ճակատ ճակատի, երես երեսի կը մարտնչէին, հիմա օդէն, ջրուէն թէ ցամաքէն կրակ ու աւեր կը սփռեն արդի գիտութեան հնարած գէնքերը: Ո՛ւր մնացին ազնուութիւն, արուժիւն ըսուած բաները...

Հրացանը զիս մղեց դէպի թանգարան: Ես այդպիսի դժբախտ ճակատագիրի ենթարկուելիք գործիք մըն էի ինչու: Թանգարաններու ապակեայ դարանները իմ տեղս չէին: Ատոր ալ հաշտուեցանք. երբ չկային զիս վեր բռնող ուժեղ բազուկները, ինչ կրնային ընել:

Բայց հիմա, երբ զիս դուրս բերին թանգարաններէն, իմ եւ մարդկութեան ճակատներուն ուսուր ու ամօթանք քսեցին: Ես, որ հերոսներ կերտած էի, կայսրութիւններ կերտած եւ տապալած էի, հիմա կը դուրսիմ հարս ու փեսայի ձեռքերուն մէջ՝ հարսանեկան կարկանդակ կտրելու համար: Հո՞ս պիտի հասնէի: Սուրս, սո՛ւր, այս ինչ անհոգի ճակատագիրի կ'ենթարկուիս: Փոխան արեան, որ մարդկային ամէնէն թանկ հեղուկն է, քեզ կը լուան զինիով եւ շամփանիայով: Աւա՛ղ փառացս անցաւոր: Յետոյ, բազում համբոյժներէ եւ բարեմաղթութիւններէ ետք, կը բաժնեն ինձմով կտրուած կարկանդակը: Կը սրբուի շեղբի վրայի քրմման, որ ինքնին մարդկութեան առողջութեան թիւ մէկ թշնամին է: Ապա՛ղ վեր բարձրացումը շեղ պատեանի մէջ ու կը վերցուիմ: Ինչ դժբախտ ճակատագիր՝ ինձի պէս պատմութիւն կերտած գէնքի մը համար: Եւ վա՛յ այն ազգին, որ սուրբ պարզապէս հարսանեկան կամ տարեկարձաներ կարկանդակ կտրելու համար միայն կը գործածէ...

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂՔԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ




ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՃԱԽԱԿԻ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԸ ԵԼԵԿՏՐԱԾԻՆ ՇԱՐԺԱԿՆԵՐՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ ԱՆՏՐԱԺԵՇՏ ԿԸ ԴԱՐՉՆԷ

Մեծ թիւով լիբանանեան հաստատութիւններ եւ ընկերութիւններ այսօր ունին իրենց անձնակազմը երկարամիջամիտ շարժակները եւ անոնք երբեք չեն վստահիր պետական ընկերութեան հայթայթումին, որովհետեւ տարիներու փորձառութեամբ անոնք գիտեն, թէ կարելի չէ կախեալ մնալ անկէ, եւ յաջող արդիւնքի մը յանգեալու համար պէտք է ապահովել անձնակազմի ջոցներ: Այդ հաստատութիւններուն սեփականատէրերը կը շնորհակալ ընդունեն շարժակներով աշխատող նուազ ծախս կ'ենթադրէ, քան՝ պետութեան կողմէ տրամադրուող հոսանքը: Կան հաստատութիւններ, որոնք մտադրովին անջատած են պետական հոսանքը եւ տարիներէ ի վեր կ'օգտագործեն անձնակազմի շարժակները:

Ելեկտրականութեան յաճախակի ու անակնկալ ընդհատումներուն պատճառով ելեկտրածին շարժակները այսօր իրենց տիրական ու ազդեցիկ դերակատարութիւնը ունին լիբանանեան կեանքի բոլոր բնազաւառներուն մէջ: Անոնք կենսական կարիքն են մարդոց առօրեային եւ հիմնական տեղ կը գրաւեն

թեան, որովհետեւ արհեստագիտութեան սրբանշան յառաջդիմութեան այս դարուն ամէնէն պարզ բայց անփոխարինելի գործիքներէն մէկը կը համարուի համակարգիչը, որ ներկայ է բոլոր հաստատութիւններուն մէջ եւ մեծապէս կ'օժանդակէ աշխատանքի հեզասահ ընթացքին: Կարելի է ըսել, թէ առանց ելեկտրականութեան, այսինքն՝ առանց համակարգիչի, կարելի չէ որեւէ աշխատանք տանիլ եւ հաստատութեան առօրեայ գործը շարունակել:

Պարագան նոյնն է նաեւ փոքր գործարաններուն, խանութներուն եւ նոյնիսկ արհեստաւորներու աշխատանքին: Փաստօրէն, նոյնիսկ եթէ անմիջականօրէն արհեստագիտական վերջին ներուպահած հաստատութիւնը դարձեալ անհրաժեշտ ու տարրական է որեւէ գործիք աշխատանքի շարունակելու համար: Այս տագնապը տարիներ շարունակ ներկայացուած է պետութեան եւ անկախ 1997էն ի վեր արբանազաւառներուն մէջ: Անոնք կենսական կարիքն են մարդոց առօրեային եւ հիմնական տեղ կը գրաւեն



ազդեցութեան կողքին, այս շարժակները ունին նաեւ իրենց ժխտական կէտերը:

Տարիներէ ի վեր քաղաքացիները ամէն գիշեր կը պահած հաստատութիւն մը, ելեկտրականութիւնը դարձեալ անհրաժեշտ ու տարրական է որեւէ գործիք աշխատանքի շարունակելու համար: Այս տագնապը տարիներ շարունակ ներկայացուած է պետութեան եւ անկախ 1997էն ի վեր արբանազաւառներուն մէջ: Անոնք կենսական կարիքն են մարդոց առօրեային եւ հիմնական տեղ կը գրաւեն

Ասոր կողքին, քաղաքացիին համար ամէն ամիս շուրջ 20 - 25 տոյր եւ որոշ շրջաններ նոյնիսկ աւելի վճարելը ինքնին բաւական կը դժուարացնէ արդէն իսկ ընկերային ու տնտեսական վատ պայմաններուն մէջ ապրող լիբանանցիներուն նիւթական կացութիւնը: Փաստօրէն ամէն ամիս պետութեան վճարած գումարին կողքին քաղաքացին կը վճարէ շարժակներէն ստացած ելեկտրականութեան սակը:

Կացութիւնը աւելի կը դժուարանայ ու կը բարդանայ այն շրջաններուն մէջ, ուր այդ «ղրական ու ժխտական» տուեալները ունեցող շարժակները գոյութիւն չունին: Այս մէկը աւելի կը շեշտուի գիւղական շրջաններուն մէջ, ուր ելեկտրականութեան ընթացքը բաւական հինգած են ու չեն վերանորոգուած եւ գոյութիւն չունին շարժակներ: Հոն խանութպանները կը վկայեն, թէ շատեր իրենց խանութները փակած են, որովհետեւ անկախ սկսած է իսկական

սկսած են դառնալ քաղաքացիներուն մղձաւանջը եւ անոնց հոգեբէն մէկը: Ամբողջ աշխարհին մէջ շատ բնական նկատուող ելեկտրականութեան ապահովումը պայթարի ու վէճերու դուռ կը բանայ լիբանանի մէջ եւ անկախ կը վերածուի դժուար հասանելի երեւոյթի մը:

Ելեկտրականութիւնը ու անոր գոյութիւնը այսօր տարրական են օրուան ընթացքին ու մարդոց առօրեային մէջ: Հակառակ բոլոր հարցերուն եւ դժուարութիւններուն, հակառակ շարժակներուն պատճառած աղմուկին ու ապականումին, ոչ մէկը կրնայ ըսել, թէ ինք կրնայ ապրիլ առանց անոնց եւ իր կեանքը շարունակել:

Լիբանանցիին կեանքին մէջ ելեկտրածին շարժակները սկսած են գրաւել իրենց իւրապատու տեղը, եւ անոնք դարձած են անհրաժեշտ ու հիմնական:

Սակայն լիբանանցիին տակաւին կ'ապրի այն յուսով, որ պիտի գայ այն օրը, երբ ինք պիտի ձեռք գտնի այս բոլոր դժուար



մեր կեանքին մէջ: Այսօր կեանքը իր բնական ընթացքով չի կրնար ընթանալ, եթէ տուներուն եւ խանութներուն մէջ անընդհատ ելեկտրականութիւնը գոյութիւն չունենայ, մասնաւոր՝ ամբարն շրջանին: Այսօր տան գրեթէ բոլոր գործիքները կը բանին ելեկտրականութեամբ եւ սառնարանները լեցուն են այնպիսի ուտելիքներով, որոնք փճացումը ինքնին մեծ վնաս կը պատճառէ ըլլալ ընտանիքներուն, ըլլալ վաճառատուներուն: Քանի մը ժամ առանց ելեկտրականութեան մնալը մեծ հարց չէր ներկայացներ նախապէս, սակայն այսօր նոյնիսկ մէկ ժամի ընդհատումի պարագային կացութիւնը բաւական կը բարդանայ, եւ բոլոր բնազաւառներուն մէջ աշխատանքը կ'ամ կը կաղայ եւ կ'ամ լրիւ կը դադրի:

Հաստատութիւնները եւ մեծ ու փոքր ընկերութիւնները եւս կարելիութիւն չունին աշխատելու եւ բնական իրենց գործունեութիւնը շարունակելու առանց ելեկտրականութեան:

Յաջող տարի լիբանանցիին 24 ժամ ելեկտրականութիւն պիտի ունենայ եւ ոչ մէկ դժուարութիւն պիտի դիմագրաւէ: սակայն ինչպէս բոլոր խոստումները, այս մէկը եւս ամէն տարի ժառանգութիւն կը մնայ յաջորդ տարուան, եւ լիբանանցիին կը սպասէ այդ օրուան, սակայն ապարդիւն...

Տագնապները անձնապէս լուծելու նախաձեռնութեան վարժ քաղաքացիին այս պարագային եւս դիմեց իր անձնական միջոցներուն: Կարգ մը «մտահոգ» քաղաքացիներ, ձեռնարկած են անձնական ելեկտրածին շարժակներու գնման եւ թաղեցիները ելեկտրականութեամբ օժտելու սպասարկութեան: Անոնք այս մարդը ուղղակի արհեստի վերածելով՝ անցած են աշխատանքի եւ նոյնիսկ մէկ թաղէն միւսը մրցակցութիւն ծար առած է, եւ քանի մը տարի նուազ գանձելով կը փորձեն գրաւել թաղեցիները:

Սակայն պէտք է շնորհակալ ընդունենք զանոնք, որ թէ տնտեսական դժուար այս օրերուն զրական

նար մաքուր օդ չունելու, ո՛ւր ալ գտնուի:

Թաղերուն մէջ նոյնիսկ կուրծներ ծայր կ'առնեն ելեկտրածին այս շարժակներուն պատճառով եւ անոնց աղմուկն ու վէճերուն ձայնը անտանելի մթնոլորտ մը կը ստեղծեն արդէն իսկ դժուար ու անհաճոյ պայմաններուն մէջ ապրող լիբանանցիին:

Ապահովութեան ուժերը շատ յաճախ զանգատներ կը լսեն այդ շարժակներուն հանած աղմուկին մասին եւ անոնց կը դիմելի, որպէսզի հարցը լուծեն, սակայն կայ նաեւ հարցին միւս կողմը, որ առանց այդ շարժակներուն կարելի չէ ապրիլ:

Աւելի «երանելի» կացութեան մէջ կը յայտնուին այն քաղաքացիները, որոնց չէնքերը կը գտնուին շարժակներուն մօտերը: Անոնք կը վկայեն, թէ շարժակներուն պատճառով իրենց տուները կը դղրդան եւ ձայնը կը հնչէ անդադար ու առանց ընդհատումի, այնքան, որ իրենք իսկ չեն զգար, թէ լուռութիւն գոյութիւն ունի կամ ինչ է լուռութիւնը:

Վնաս պատճառով դիւղացիներուն, եւ անոնք բազմիցս մեծ քանակութեամբ ուտելիքներ թափած են:

Ելեկտրականութիւնը ու անոր ապահովութիւնը

ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնայու Գաղտնիքները

ԱՐԵԱՆ ԳԵՐՃՆՇՈՒՄ (ԹԱՆՍԻՈՆ)

Իւրաքանչիւր հիւանդութիւն ունի իրեն յատուկ անդակաւանդներ: Բժիշկները նոր ուսումնասիրութիւններու վրայ հիմնուելով սկսած են պատրաստել ճաշացուցակներ, յատուկ ամէն մէկ հիւանդութեան:

Քսանէն քառասուն տարիքի անհատներուն արեան ճնշման աստիճանը մօտաւորապէս ութսունի եւ հարիւր քսան միլիմետր սնդիկի միջեւ կը տարուբերի, իսկ տարիքի յառաջացման հետ, արեան ճնշման աստիճանն ալ կը սկսի բարձրանալ, որուն պատճառը արեան երակներու հետզհետէ խցումն է: Եթեմաստուն տարեկանին, ճնշումը կը սկսի ութսունի եւ հարիւր յիսուն սնդիկի միջեւ տարուբերիլ: Արեան ճնշումը աւելի բարձր կ'ըլլալ պարզ կամ գաղջ օդին, քան տաք օդին:

Բժիշկները կ'ըսեն, թէ 95/160 աստիճանէն վեր եղող ճնշումը բարձր կը նկատուի, իսկ 70/100 աստիճանէն վար՝ ցած:

Ճաշին պարունակած ճարպին քանակը մեծ ազդեցութիւն ունի արեան ճնշումին բարձրացման մէջ, հետեւաբար, ուշադիր պէտք է ըլլալ ուտելիքին, յատկապէս անոնք, որոնք արեան ճնշումը ունին:

Յատկանշական է սերտ կապը աղին եւ արեան բարձր ճնշման միջեւ: Այն ժողովուրդները, որոնք քիչ քանակութեամբ աղ կը գործածեն իրենց ուտելիքներուն մէջ, շատ աւելի նուազ հաւանականութիւն ունին արեան ճնշումը ունենալու, քան մեծ քանակութեամբ աղ սպառող ժողովուրդները: Էսքիմոներու, լատին ամերիկեան, ափրիկեան եւ աստորալիակա կարգ մը ցեղերու մօտ, որոնք գրեթէ աղ չեն գործածեր, արեան ճնշումը ունեցողներուն քանակը շատ նուազ է:

Այն դեղահատերը, որոնք միզային հարցերու համար կը արուին, կարողութիւն ունին նուազեցնելու արեան ճնշումը, որովհետեւ մարմինէն դուրս կը հանեն աւելորդ աղերը: Հետեւաբար ճաշին մէջ նուազ քանակութեամբ աղ գործածելը նոյն ազդեցութիւնը կ'ունենայ:

Արեան ճնշումը ունեցողները դեղահատերու կողքին պէտք է նուազեցնեն նաեւ իրենց սպառած աղին քանակը: Տարօրինակ է այն, որ արեան ճնշումը ունեցողներուն մեծամասնութիւնը մեծ սէր ունի աղի հանդէպ: Մինչեւ իսկ բժիշկ մը ըսած է, թէ արեան ճնշումը շատ ունեցողներուն մօտ աղի պահանջը կ'աւելնայ, որովհետեւ աղի համին զգացողութիւնը կը սկսի պակսիլ անոնց մօտ:

Բժիշկներ կը յանձնարարեն, թէ նախընտրելի է այլ տեսակի աղեր գործածել, որոնք ստիւտի փոխարէն փոթասիւտ քլորայտ կը պարունակեն: Գլխաւոր ուտելիքներէն մէկը, որով կարելի է փոխարինել աղի որոշ քանակ մը, հացն է:

Հաւազոյն ուտելիքը, որ այս հիւանդութեան հիմնական սնունդը կը սեպուի, բրինձն է: Օրական կարելի է 250էն 350 կրամի միջեւ բրինձ սպառել: Ինչպէս նաեւ օրական կարելի է խմել 750էն 1000 միլիլիթր պտուղի հիւթ: Այս սննդակարգն առաջին քանակութեամբ ստիւտիւտ, փրօթիչին եւ ճարպ կը պարունակէ: Նախընտրելի է բրինձը եփել ստիւտիւտէ գերծ ջուրի մէջ: Արեան ճնշումը ունեցողներուն համար արդիւրած է նաեւ մեծ քանակութեամբ թէյ կամ սուրճ խմելը:

ՔԱՐԱՆ ԵԱՐՏԸՄԵԱՆ

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՅԱՍՐԱՐ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՆԸՐ
ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԷՏԻ ԸՆԴԵ, Բ. ՅՐԿ
ՇՆՆ. (01) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.**

Գաղտնիքները
ՆՈՐԱ ԲԱՐՍԵԼԵԱՆ





Կնոջական

Փորձ ԵՐԳՆԱՐԱՆ

ԳԻՏԵ՞Ք ԴՈՒՔ ՉԵՁ ԱՐԺԵՒՈՐԵԼ

Փոքր թեթևություններ բոլորս ալ ունենք, ոմանք, սակայն, գիտեն այդ թեթևությունները արժեքավորել և «աթու»ի վերածել. դուք անոնցմէ մէկն էք...

1
Արտաքինով կը յիշեցընէ՞
Մարին Մոնրոն
Սոֆիա Լորէնը
Մատոնան:

2
Ձեր ընկերը ձեզի հետ կը ժամադրուի շքեղ պանդոկի մը մէջ: Զինք կը սպասէ՞
Սրահին խորը
Թեքստը
Պարը:

3
Կը մասնակցի՞ք «Դրախտ» նիւթով դիմակահանդէսի մը: Կը ծպտուի՞ք
Եւայի կերպարանքով
Օձի կերպարանքով
Սուրբի կերպարանքով:

4
Գործի մը դիմած էք ու կը հարցաքննուիք: Իրականութիւնը կ'ըսէ՞ք
Քիչ մը կը ստէ՞ք
Շատ կը ստէ՞ք, կարելորդ գործի ընդունուի՞ն է...

5
Եթէ պտուղի մը պիտի վերածուիք, կ'ընտրէ՞ք Տանձը

Դեղձը
Մանկան:
6

Արձակուրդի նկարներուն մէջ «հաշտ» էք եւ ձեր ընկերը կը ծաղրէ ու կը խնդայ...
Կ'ազդուիք եւ կը տխրիք
Կը գայրանաք
Իրմէ աւելի կը խնդաք:

7
Ձեր պաշտօնակիցներուն մասին կրնաք ըսել՝
Ձեզմէ լաւ են
Դուք իրենցմէ լաւ էք
Շուքի մէջ մնալու վախ չունիք:

8
Եթէ ձեզի առաջարկուի ծանուցումի մը մասնակցիլ, կ'ընտրէ՞ք
Հանքային լուրինը
Անուշահոտինը
Լուսաքի ղեղինը:

9
Լողազգեստ մը գնելու համար կարծիքը կ'առնէ՞ք
Բարեկամուհիի մը
Ծախող օրիորդին
Ձեր ընկերոջը:

10
Ձեր տնօրէնը ձեզ կը շնորհակարէ ձեր կատարած մէկ լաւ գործին համար:
Կը կարմրիք եւ կը պապանցիք
Կը ժպտիք եւ շնորհակարտութիւն կը յայտնէք
Առիթէն կ'օգտուիք ամսականի յաւելում պահանջելու:

ԱՐԳԻՒՆՔ
● Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ▲ է, վարպետ հմայող մըն էք: Ձեր կարելի կ'ընէք գեղեցիկ եւ երիտասարդ երեւցալու համար: Այրերուն կողմէ հաւնուիլն ու գնահատուիլը կ'աւելցնէ ձեր ինքնավստահութիւնը եւ կը չբացնէ բոլոր բարոյութիւնները:

● Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ○ է, գիտէք, որ կատարել չէք, բայց եւ այնպէս առանց գանգատի կ'ընդունիք իրականութիւնը: ձիշդ է, որ գեղեցիկ քիթ մը չունիք, բայց ձեր ճշմարտութիւնը կամ գեղեցիկ շուրթերը կը հաւասարակշռեն ամէն բան... Այսպէս կը մտածէք եւ սխալած չէք: Իրատես եք եւ հաւասարակշռուած, ձեր կեանքը չէք դժուարացնէք եւ ի գուր չէք դժբախտանք:

● Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ■ է, ինքնավստահութեան պակաս ունիք: Ձեր մանկութեան ի վեր հակում ունիք ձեր առաւելութիւնները անտեսելու եւ թերութիւնները տեսնելու: Բարոյութի կծիկ մըն էք: Նուազ խստապահանջ եղէք ձեր անձին նկատմամբ եւ համոզուեցէք, որ ոչ ոք կատարել է: Ձեր կեանքին հանդիսատեսը մի՛ ըլլաք, այլ՝ դերակատարը, ձեր առաւելութիւնները արժեւորելու համար համարակցեցէք ցոյց տալ զանոնք:

ՄԵՐ ԶԱՄԱԿՆԵՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

ՔԻԹԻ ԱՐԻՒՆԱՏՈՍՈՒԹԻՒՆ



Քիթի արիւնահոսութիւնը կեցնելու մասին շատ մը սխալ կարծիքներ կան, որոնք ոչ միայն չեն դարձանք, այլ ընդհակառակը՝ աւելի եւս կը ծանրացնեն արիւնահոսութիւնը:

ՍԽԱԼ ԱՐԱՐՔՆԵՐ

Գնդակի հարուած մը, երկար ժամանակ արեւուն տակ կենալը կամ մատով «մաքրելը» պատճառ կ'ըլլան, որ երեխային քիթը արիւնի: Բացի շատ լուրջ պարագաներէ, կարելի է քիթի արիւնահոսութիւնը մը շատ դիւրաւ կասեցնել, պայմանաւ որ հրաժարինք կարգ մը սխալ սովորութիւններէ:

Այսպէս, երբեք կոնակին վրայ չպակեցնենք քիթը արիւնող երեխան, որպէսզի արիւնը անոր կողորդը չհաւաքուի: Նաեւ չարգիլել, որ երեխան խնչէ, այն մտաւախութեամբ, որ արիւնահոսութիւնը կրնայ սաստկանալ:

ՃԻՇԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐ

Երեխան աթոռի մը վրայ նստեցնել՝ գլուխը թեթեւօրէն դէպի վար կախած:

Թեյադրել երեխային, որ մէկ անգամ, առանց մեծ ճիգի խնչէ, որպէսզի ի հարկին լերդացած արիւնը մաքրուի:


Սորվեցնել, որ քանի մը վայրկեան բութամատով եւ ցուցամատով սեղմած պահէ քիթը:

Այս երեք կարեւոր հանգրուաններէն ետք, առհասարակ արիւնահոսութիւնը կը դադրի:

Լուրջ արիւնահոսութիւններու պարագային, առանց ուշացումի դիմել ըփշկին:

ԽՈՐԱԳԻՐ

ՊԱՆԻՐՈՎ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ



- Բաղադրութիւն՝ 6 անձի համար.
- Տուփ մը սունկի ապուր
 - Կէս թէյի դգալ անուշ պղպեղ
 - Կէս թէյի դգալ սեւ համեմ
 - Չորս միջակ գետնախնձոր
 - Լեցուն գաւաթ մը տաշուած կրիւլէր պանիր

Պատրաստութիւն.
Սունկի ապուրին աւելցնել համեմները եւ խառնել: Գետնախնձորները շատ լաւ լուալ եւ առանց կեղուելու՝ կլոր շերտել:

Ափսէին յատակը կարագով ծեփել եւ գետնախնձորները համալի շարել, վրան ցանել տաշուած պանիրը եւ, վերջապէս, թափել սունկով թացցանը:


Ափսէն ծածկել ալիւմինիում թուղթով եւ փուռին մէջ եփել 45 վայրկեան, ապա՝ ալիւմինիումը հանել եւ 10 վայրկեան եւս եփել, որպէսզի երեսը կարմրի:

Հրամցնել տաք վիճակի մէջ, նախընտրաբար՝ մսեղէնի մը կամ խառն բանջարեղէնի մը կողքին:


ԿՈՆԱԿԻ ՄԱՐԶԱՆՔ

Հեւքոտ եւ ծանրաբեռնուած օրուան մը աւարտին առաջին տուժողները մեր կոնակն ու սրունքները կ'ըլլան:

Ահաւասիկ 3 շարժումներ՝ կոնակի հանգստութեան համար:



Ա.- Գետին պառկած, թեւերը հորիզոնական, ծունկերը ծալուած եւ առանց իրարմէ բաժնելու դէպի աջ տանիլ՝ նոյն պահուն գլուխը դէպի ձախ դարձնելով: Շարժումը բազմաթիւ անգամներ կրկնել՝ ծունկերուն եւ գլխուն ուղղութիւնը յաջորդաբար փոխելով:



Բ.- Գետին պառկած, ծունկերը միացած ծալել եւ դէպի կուրծք բարձրացնել՝ գոյգ ձեռքերով զանոնք բռնած: Խորունկ շնչել, ապա՝ արտաշնչել: Շարժումը կրկնել 6 - 10 անգամ:



Գ.- Ոտքի, ոտքերը իրարմէ հեռու, կոնակը ծռած, գոյգ թեւերով օրորուիլ ձախէն աջ եւ փոխն ի փոխ... Շարժումը կրկնել առնուազն 10 անգամ:

Պատրաստե՛ք ՇՈՒՐԿԱ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային Իշխանութեան Բաղաբական ժողովը կարիքը ունի Ազգային Առաջնորդարանի նոր դիւանապետի մը:

Թեկնածուն պարտի լրացնել հետեւեալ պայմանները.

- 1.- Տիրապետ հայերէն եւ արաբերէն լեզուներուն եւ ծանօթ ըլլալ անգլերէնի եւ ֆրանսերէնի:
- 2.- Ունենալ համալսարանական նուազագոյնը MBA կամ համագոր վկայական:
- 3.- Ընտրու ըլլալ արդի վարչագիտութեան եւ փոխ յարաբերութեան ուսումնքի գիտելիքներուն:
- 4.- Ծանօթ ըլլալ տնտեսագիտութեան:
- 5.- Ունենալ լուրջ փորձառութիւն՝ վերոնշեալ մարզերուն մէջ:

Թեկնածուն կը պահանջուի՝ Ներկայացնել իր կեանագրականը (CV)՝ հետեւեալ հասցին՝

- Ազգային Առաջնորդարան, Պոլսի Շամուտ, Արաքս փողոց
- կամ e-mail: azkayin@inco.com.lb
- Fax: 01-258305

ԴԻՄԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



This summer,
you will fall in love with our outdoor furniture



GALERIE VANLIAN
A WORLD OF OUTDOORS
Dora Highway
Tel: 01 241951

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ...

Շարունակում՝ հրդեհներ

րուբլիներ, Միացեալ Նահանգներում, Եւրոպական Միութեան, Իրանի, արաբական աշխարհի եւ այլ երկիրներու հետ: Մեր կարծիքով, Հայաստան կարիքը ունի աւելի ընդգծելու իր կողմնորոշումները դեպի որոշակի բեւեռ:

Պ.- Իմ գնահատումովս, այսօրուան արտաքին քաղաքականութիւնը վերջին հաշուով ծառայած է իր նպատակին: Ան եղած է բաւական արդիւնաւէտ, եւ մենք յաջողած ենք հաւասարակշռուած քաղաքականութեան շնորհիւ խուսափել լուրջ մարտահրահչւնների, որոնք եղած են նախորդ հինգ տարիներուն ընթացքին:

Լատիս, մեր հիմնական խնդիրը հետեւեալն է. եթէ որեւէ երկրի հետ յարաբերութիւններու մէջ մեր շահերէն բխող որոշակի հարցի մէջ արդիւնքի չենք հասնիր, ապա պէտք է փորձել այդ խնդիրը լուծել ուրիշ պետութեան մը հետ փոխշահաւէտ համագործակցութեամբ: Իրար ամբողջացման քաղաքականութիւնը, իմ կարծիքովս, այս մարտավարութիւնը կ'ենթադրէ:

Պ.- Իմ գնահատումովս, այսօրուան արտաքին քաղաքականութիւնը վերջին հաշուով ծառայած է իր նպատակին: Ան եղած է բաւական արդիւնաւէտ, եւ մենք յաջողած ենք հաւասարակշռուած քաղաքականութեան շնորհիւ խուսափել լուրջ մարտահրահչւնների, որոնք եղած են նախորդ հինգ տարիներուն ընթացքին:

Լատիս, մեր հիմնական խնդիրը հետեւեալն է. եթէ որեւէ երկրի հետ յարաբերութիւններու մէջ մեր շահերէն բխող որոշակի հարցի մէջ արդիւնքի չենք հասնիր, ապա պէտք է փորձել այդ խնդիրը լուծել ուրիշ պետութեան մը հետ փոխշահաւէտ համագործակցութեամբ: Իրար ամբողջացման քաղաքականութիւնը, իմ կարծիքովս, այս մարտավարութիւնը կ'ենթադրէ:

Պ.- Իմ գնահատումովս, այսօրուան արտաքին քաղաքականութիւնը վերջին հաշուով ծառայած է իր նպատակին: Ան եղած է բաւական արդիւնաւէտ, եւ մենք յաջողած ենք հաւասարակշռուած քաղաքականութեան շնորհիւ խուսափել լուրջ մարտահրահչւնների, որոնք եղած են նախորդ հինգ տարիներուն ընթացքին:

Հ.- Ի՞նչ պէտք կ'ընենք հետագայում - բարեկարգ

Միւս յայտնի պայմանը այն է, որ Հայաստան հրաժարի ցեղասպանութեան հետապնդումէն, իսկ հետոք հարցեր են, որոնք կենսական նշանակութիւն ունին եւ ընդգրկուած են մեր արտաքին քաղաքականութեան օրակարգին մէջ:

Թուրքիոյ հետ բնական յարաբերութիւններու հաստատումը հաւանական

է, եթէ չըրուին նախապայմաններ, անոր կողմէ չէզոքութիւն դրսեւորուի Հարաբարի հարցին մէջ եւ, վերջապէս, Թուրքիա քայլ նետէ Հայկական Յեղափոխութեան ճանաչման ուղղութեամբ:

(Արեւմտահայերէնի վերածում)

ՍԱԿԱՐԱՆ

Պէլլուրի սակարանից մէջ օտար դրամանիշներու փակման սակագինները հետեւեալներն են:

Սուրիական թղթուկի	32,35 - 32,45 լ.ո.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00 լ.ո.
Քուեյթեան տինար	5035,00 - 5060,00 լ.ո.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ո.
Պահիէյնեան տինար	3985,00 - 4010,00 լ.ո.
Ա.Մ.Էմիրութեանց տիրիամ	410,75 - 412,75 լ.ո.
Քաթարեան ոխալ	413,75 - 415,75 լ.ո.
Սեուտական ոխալ	402,00 - 404,00 լ.ո.
Օմանեան ոխալ	3895,00 - 3920,00 լ.ո.
Եգիպտական կինէ	249,00 - 259,00 լ.ո.
Անգլիական սթերլին	2530,00 - 2540,00 լ.ո.
Չուիքեթիական ֆրանք	1138,00 - 1143,00 լ.ո.
Թրքական լիրա	105,50 - 106,00 լ.ո.
Կիպրական փաուստ	3000,00 - 3025,00 լ.ո.
Ճափոնական հապար եէն	12,60 - 12,70 լ.ո.
Ափրիկեան հապար ֆրանք	13,10 - 13,15 լ.ո.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ո.
Քանադական տոլար	1118,00 - 1123,00 լ.ո.
Աւստրալիական տոլար	1005,00 - 1010,00 լ.ո.
Եւրո	1763,00 - 1773,00 լ.ո.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	140,000 - 145,000 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	125,500 - 130,500 լ.ո.
Օմանեան մէկ ոսկի	116,000 - 121,000 լ.ո.
Մեքսիկական փետոս	667,000 - 687,000 լ.ո.

Մէկ քիլոկրամ ձող ոսկի 17,400,000 - 17,600,000 լ.ո.

Մէկ օսն ոսկի 359,50 - 360,00 S

Մէկ օսն արծաթ 4,56 - 4,58 S

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	1.1685 - 1.1695
Քանադական տոլար	1.3442 - 1.3452
Չուիքեթիական ֆրանք	1.3225 - 1.3235
Ճափոնական եէն	118.57 - 118.67
Մէկ սթերլին	1.6776 - 1.6786

Մէկ փոլար 560 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒԼՈՒԹԵՐ

Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում

Ա. կարգ	4 7/8	5
Բ. կարգ	5 1/8	5 1/8

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԵԹՍԱԼԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կաթողիկոսարանի բարերարներէն՝ ՃՈՒ ԵՒ ԶՈՒՄՈՐ ԿՈՒՐՃԻ հոգիներուն համար հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի յառաջիկայ Կիրակի, 22 Յունիս 2003, Ամբիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

Կը հրաւիրուին Ճոն Եւ Զուարթ Կուրճ Համալսարանական Հիմնադրամէն կրթաթոշակ ստացած եւ ստացող նախկին եւ այժմու ուսանողները, ներկայ գտնուելու արարողութեան եւ իրենց արժանի յարգանքը ընծայելու ազնուահոգի եւ կրթամուրթ բարերարներուն:

ԴԻՒՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5465

Պատրաստեց՝ Ս.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՐԻՉՈՒԱԿԱՆ ՈՒՂԱՄԱՅԵՍ

- | | |
|--|--|
| 1. Ծիրանագոյն վերարկու - Գաշտ: | 1. Թարթափ - Միջերկրականեան երկիր: |
| 2. Մուղակ - Օձի տեսակ: | 2. Պատուար - Տարիք: |
| 3. Փոքրացնող մասնիկ - Սոսկ: | 3. Ազամանդ - Ուրախ - Հայ գուսան: |
| 4. Եւրոպական մայրաքաղաք: | 4. Երկնատուր սնունդ - Սարսափ: |
| 5. Գարաւ: | 5. Ստացական ածական - Շովպային: |
| 6. Աղուամազ - Կրկնուած ձայնաւորներ: | 6. Տրէ - Տապալի: |
| 7. Ածականակերտ մասնիկ - Կրկնեղբ: | 7. Մտուկ: |
| 8. Իգական օտար անուն - Բեղմնաւորուած ձուկ: | 8. Յարդանկողին - Լեւրան անարեւ կողմը: |
| 9. Դէպքի մը պատահման վայր - Ճոկան: | 9. Ս. Գրային նահապետ - Միջոց, դարման - Չայնանիշ: |
| 10. Հայ դիցուհի - Զիւլթ: | 10. Լուծայ, մանր դրամ - Կուռար: |

ԹԻԻ 5464

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Մ	Ռ	Շ	Ս	Ա	Կ	Ա	Մ
2	Ա	Ք	Փ	Թ	Ա	Ր	Մ	Ի
3	Ք	Գ	Շ	Լ	Ա	Ն	Մ	Մ
4	Ջ	Ե	Մ	Կ	Բ	Տ	Ե	Ի
5	Ե	Ա	Ր	Ա	Ի	Ր	Ա	Ն
6	Ն	Ա	Ր	Ի	Չ	Պ	Շ	Ս
7	Ի	Ն	Ե	Ղ	Ա	Օ	Ն	
8	Ա	Գ	Գ	Չ	Ո	Ղ	Յ	
9	Ա	Յ	Ս	Ա	Խ	Ա	Ր	Ա
10	Մ	Մ	Կ	Ն	Ա	Տ	Ի	Ա

☆ Ի՞նչ կըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)

Այսօր ձեզմէ պիտի պահանջուի տիտանական գործ կատարել. ոչ մէկ հարց: Պիտի կարենաք առաջարկուած բոլոր տեսակի աշխատանքները յաջողցնել:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Մարզանքը մեծ բարիք պիտի ըլլայ ձեր առողջութեան: Ուրեմն մի՛ դադարէք մարզանք կատարելէ: Մաւաւանդ առատութեան կամ երեկոյեան ժամերուն քաղցրէք:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Եթէ անգործ էք, պիտի ունենաք լաւ պատեհութիւն մը ձեր ասպարէզէն ներս նոր գործ մը գտնելու: Օրը նպատուոր է ամէն տեսակետով:

ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Ուսանողներու համար օրը յաջող է: Կրնաք ունենալ փայլուն յաջողութիւն: Չար լեզուները պիտի գարմանան ու նախանձին ձեր այս յաջողութեան:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Բանակցութիւններու թագաւորը պիտի նկատուիք այսօր: Գնումի մը պարագային պիտի ունենաք ապահով շահ մը: Օրը ունի այլ կարգի շահաբեր անակակալներ:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Վերջերս զիրար գտած գոյգերը մեծ ուրախութեամբ պիտի լեցուին: Անոնք զիրար աւելի լաւ պիտի ներհանեն եւ պիտի գնահատեն իրարու արժանիքները: Դուք անոնցմէ մէկն էք:

ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Աշխատանքի մարզը պիտի ըլլայ հանգիստ ու ապահով: Պիտի կարենաք զուարթ մթնոլորտ ստեղծել ձեր շուրջը: Օրը պիտի ըլլայ արդիւնաւետ:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Այսօր ոչինչ ունիք մասնաւոր գործ մը կատարելու: Ունիք սակայն լաւ սպասում մը սիրոյ մարզին մէջ: Սերը կանգնած է ձեր դրան սեմին եւ ձեր դուռը պիտի բախէ շուտով:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Խաղաղութիւնը պիտի տիրէ ձեր ընտանիքին մէջ: Ձեր ունեցած վեճերը կը պատկանին անցեալին: Հետեւաբար շարունակեցէք պահել սիրալիւր մթնոլորտը:

ԱՅԾԵՂԶԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Գնաւոր)

Բոլոր աստղերը ձեզ պիտի պաշտպանեն իրենց փայլով, կազմակերպական ուժով, մարտունակութեամբ, զգացական նախատեսութեամբ: Ամէն ինչ արտօնուած է ձեզի այսօր:

ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Դրամական հարցեր ունիք լուծելիք: Նոյն ատեն դարձաւ խեղճութիւններ պիտի ընէք աւելորդ գնումներ կատարելով: Ձեր դրամին արժեքը գիտցէք:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Անձէ մը ծառայութիւնը մը պիտի խնդրէք, անձ մը, որուն հետ շատ քիչ կը տեսուիք: Ձեք համարձակել ձեր խնդիրները ներկայացնելու: Բայց դիմեցէք անոր վստահութեամբ, որովհետեւ զիրար աւելի լաւ պիտի ներհանաք, ու ան պիտի հիանայ ձեզմով:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՈՆ / ՅՈՒՆԻՍԱՐԿԵՄ / ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՆՍԱՄՊԼ ՔԱՆԱՐԻՕ» ԵՐԱԺՇԱԿԱՆ ԵՌԵԱԿԻ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ



Գ Ե Ր մ ա ն ա կ ա ն «Կէօթէ» մշակութային հիմնարկը այս ամսուան իր գեղարուեստական յայտագիրներուն շարքին կարեւոր տեղ տուած է երաժշտական եռնակի մը ելոյթներուն: «Անսամպլ քանարիօ» անունով գերմանական եռնակի մը ելոյթներուն մասնակցութիւն կը ընդունի Պալմա Կոնտրաֆէրտը (Պէյթ Շապապ, Ուրբաթ, 20 Յունիսին), Պէյրուսի կեդրոնական շրջանը (Մաքս Սթրաւս, 21 Յունիսին), Նոթր Դամ տէ մէր վանքին մէջ (Սուր, Կիրակի, 22 Յունիսին): Նշենք, որ բոլոր ելոյթները տե-

ԱՅՍՈՐ

- Նուագահանդէս՝ «Անսամպլ քանարիօ», ժամը 19:00ին, Պալմա Կոնտրաֆէրտի համալսարանին մէջ:
- Երաժշտական հանդէս՝ «Յէր ալ լա միլիք», դասական երաժշտութիւն, ժամը 20:00ին, Սէն Նիքոլայի աստիճանները:
- Նուագահանդէս՝ Արեւելեան երաժշտութեան Լիրանցի Ազգային նուագախումբի ելոյթ, ժամը 20:00ին, Սէն Ժորճի համալսարանի «Փիլեո Ապու Խաթեր սրահին» մէջ:
- Ցուցահանդէս՝ «Տարած ալ ֆան», Սէն Նիքոլայի աստիճաններ, մինչեւ 22 Յունիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Թէն Վիուզ», «Էսպաս Էս. Տէ.» ցուցարան, մինչեւ 28 Յունիս:
- Թատրոն «Սոյո», ժամը 20:30ին, «Ալ Մատինա» թատերասրահ, մինչեւ 21 Յունիս:

ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՌԱՋ 19 Յունիս 1953

ԽՄԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՊՔԵՐՈՒ ԱՌՋԵԻ...

Արեւելեան Պերլինի մէջ կատարուած հակահամայնավար ցոյցերը անհախճաբար երեւոյթ մը կը կազմեն խորհրդային տիրապետութեան տակ գտնուող երկիրներու համար: Առաջին անգամ է, որ խորհրդային իշխանութեան կարգադրութիւններուն դէմ ընդվզում կը տեսնուի հրապարակային ցոյցերով:

Անցեալ շաբաթ, Արեւելեան Գերմանիոյ մէջ կատարուած փոփոխութիւններէն ետք առաջ եկած այս ցոյցերը աւելի նշանակալից կը դառնան եւ գանազան ենթացողութիւններու դուռ կը բացեն:

Հեռագրական տեղեկութիւններու համաձայն, մօտ տասը հազար բանուորներ հաւաքուելով օդային նախարարութեան շէնքին առջեւ՝ պահանջած են ազատ ընտրութիւններ եւ աշխատանքի ժամերու նուազում: Գործաւորներու կողմէ բանաձեւուած այս կարգի պահանջներ որքէն այլ երկրի մէջ շատ բնական պիտի թուէին, բայց խնդիրը բոլորովին կը փոխուի, երբ այդ նոյն պահանջները կը լսուին երկաթէ վարագոյրէն ներս գտնուող երկրէ մը:

Խորհրդային Միութեան եւ արեւելեակ երկիրներու մէջ գործադուլները արգիլուած են 1926էն ի վեր: Իշխանութիւնները միշտ ալ ուշադիր եղած են իրենց սաղմին մէջ խեղդելու համար որքէն շարժում: Մինչդեռ Լաչիքի կերպարասի մէջ տեղի ունեցած ցոյցերու ընթացքին բանուորները ընդհանուր գործադուլի սպառնալիք ըրած են, ու ոստիկանութիւնը երբեք չէ միջամտած այս ամբոխային ցոյցը արգիլելու համար:

Արդ, եսպէս փոխուած բան մը կա՞յ Արեւելեան Գերմանիոյ հասարակական կարգերուն մէջ, թէ եղածը պարզապէս կուսակցական թաքթիկ մէկ պրոպագանդային արարարք մը, որուն նպատակն է արեւմտեան աշխարհին ու ժողովուրդներուն ցոյց տալ, թէ համայնավարական վարչակարգի ներքեւ ընկերային ազատութիւններ կը տիրեն...


ԱՅՍՈՐ 19 ՅՈՒՆԻՍԻՆ

- 1904 - Յեղափոխականներու Չիաուր խումբը կոհեր կ'ունենայ թուրքերու եւ քիւրդերու հետ:
- 1908 - Տերսիմի քիւրդերու ապստամբութիւն:
- 1954 - Սահ հայրկապետ Սմբատի (Բորոյեան):

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ.
ԿԻՍԱԲԱՐՏԱԿԱՆ ԵՐԹԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

- ՆՐԺՄԷ - Շ. Մ. Ը. Մ.՝ 2 - 0
- ՍԱԼԱՍ - ՕԼԻՄՓԻՔ՝ 1 - 2

Լիբանանի ֆուտբոլի բաժանի մրցաշարի կիսաարտակա հանգրվանի երթի մրցումներուն, երէկ Օլիմպիք եւ Նրժմէ յաղթանակներ արձանագրեցին:

Թրիփոլիի Քաղաքապետարանի դաշտին վրայ Սալամ, որ կը հիւրընկալէր Օլիմպիքը, 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին: Հակառակ անոր որ հիւսիսի կապը ինք բացաւ մրցումին հաշիւը, սակայն Օլիմպիք երկու կողմ նշանակելով յաղթական վերադարձաւ Պէյրութ: Մրցումին երեք կողմերն ալ նշանակուեցան Ա. կիսախաղին:

Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Նրժմէ - Շ. Մ. Ը. Մ. մրցումին Նրժմէ 2-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, թէեւ մրցումը սկսաւ Շ. Մ. Ը. Մ.ի տիրապետութեամբ, որ բաւական նեղ կացութեան մատնեց իր մրցակիցը:

Ա. կիսախաղին 35րդ վայրկեանին, սակայն, Շ. Մ. Ը. Մ.ի բերդապահ Ժաք Պաքճեան, որ մինչ այդ բաւական լաւ ձեւով կը պաշտպանէր իր բերդը, ստացաւ անակնկալ կողմէ, գրեթէ չտեսնելով դէպի բերդ ուղղուող գնդակը: Մեծ քառակուսիին մօտերը, Նրժմէ ապա տարածաժիրաւունք մը ստացաւ. Ապպէս Սթուէ գորտոր հարուածով մը նշանակեց յաղթական կապին առաջին կողմը:

60րդ վայրկեանին, խալէտ Համիէ դարձեալ մեծ քառակուսիին սահմաններուն մօտերէն գորտոր հարուածով մը դարձեալ պարտութեան մատնեց Շ. Մ. Ը. Մ.ի բերդապահը:

Մրցումին վերջին կէս ժամը պայտիօրէն Նրժմէ ինք եղաւ տիրապետողը: Շ. Մ. Ը. Մ.ի մարզիկներուն մօտ թէեւ ներկայ էր պայքարի ոգին, սակայն օրէն կատարուած փոխանցումները բնաւ չհասան իրենց նպատակին:

Պէյրութի ընդունիլ նաեւ այն իրականութիւնը, որ Նրժմէ մարզիկներուն ֆիզիքական պատրաստութիւնը կը գերազանցէր Շ. Մ. Ը. Մ.ի ֆիզիքականը, որ յստակօրէն կը կարօտի աշխատանքի:

Օրուան իրարարարը՝ Նապիլ Այատ յաջողեցաւ ինքզինք պարտադրել եւ ոչ մէկ առիթ տալ մրցումին խաղող ընթացքը իսնկարուելու:

Հակառակ իր կրած այս պարտութեան, Շ. Մ. Ը. Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը տակաւին դուրս մնացած չէ մրցաշարքէն, որովհետեւ դարձի մրցումը կրնայ ըսելիք ունենալ: Շ. Մ. Ը. Մ.ի մարզիկները երբեք իրենց յոյսը պէտք չէ կորսնցնեն աւարտական մրցումին տոնս մը ապահովելու իրենց երթին մէջ:

Ինչ կը վերաբերի Շ. Մ. Ը. Մ.ի համակիրներուն, երէկուան մրցումին անոնք փաստեցին, որ ոչ միայն Պուրձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին մէջ հոծ ներկայութիւն կ'ըլլան իրենց կապին կատարած մրցումներուն, այլեւ՝ Պէյրութի մէջ ալ:

Շ. Մ. Ը. Մ.ի համակիրները, ֆանֆարի ընկերակցութեամբ, տիրական ներկայութիւն էին թրիպիւններուն մէջ, քան Նրժմէի համակիրները, որոնք իրենց կապին կողմէ նշանակելէն ետք է միայն, որ սկսան հետպիտէտէ լիբանոնցիները իրենց ձայնը...

ՄԻՋՑԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔԸ ՍԿՍԱԻ ԾԱՓՈՆԻ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ

Միջամաքամասային ֆուտբոլի մրցաշարի բացման մրցումին, երէկ, ձափոն արձանագրեց տպաւորիչ յաղթանակ մը, 3-0 արդիւնքով պարտութեան մատնելով նոր Ձեյանտան, շնորհիւ՝ Սիուսուրէ Նաքամուրայի (12րդ եւ 74րդ) եւ խմբապետ Հիւթթոշի Նաքաթայիի (64րդ) նշանակած կողմերուն:

Մրցաշարքը հիւրընկալող Ֆրանսա արձանագրեց ոչ համուրիչ յաղթանակ մը, 1-0 արդիւնքով պարտութեան մատնելով Քոլումպիան, շնորհիւ՝ Թիբրի Հանրիի նշանակած փենսիլիին (39րդ):

Այսօր, ժամը 20:00ին (Պէյրութի ժամով) Թուրքիա կը ձակաւորի Միացեալ Նահանգներու դէմ, իսկ ժամը 22:00ին Պրայիլ՝ Քամերունի դէմ:

ՊԼԵԹԸՐ ԿԸ ԲՆՆԱԴԱՏԷ ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ



ՊԼԵԹԸՐ

Միջամաքամասային ֆուտբոլի մրցաշարքին նախօրեակին, ՖԻՖԱ-ի նախագահ Սեփ Պլեթըրը խստիւ քննադատեց Սպանիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը, ախոյեանութեան մրցումները ուշացնելու համար:

Մինչ մնացեալ երկիրներուն ախոյեանութիւնները աւարտեցան բաւական առաջ, Սպանիոյ ախոյեանութիւնը տակաւին չէ աւարտած եւ մէկ հանգրուան մնացած է:

«Միջազգային յայտագիրին համաձայն, Յունիս 15էն Յունիս 15ը յատկացուած է ֆուտբոլի ազգային խումբներուն: Ախոյեանութեան մրցումները ուշացնելով, Սպանիա յարգանքի պակաս կը ցուցաբերէ եւ օրինապահութիւն կը կատարէ», կ'ըսէ Պլեթըրը, աւելցնելով, որ այդ մէկը վնաս կը պատճառէ ազգային խումբներուն:

Պլեթըրը կ'ակնարկէր միջամաքամասային ֆուտբոլի մրցաշարքին բացակայած մարզիկներուն, որոնք Սպանիոյ ախոյեանութեան մրցումներուն պատճառով հեռու կը մնան ազգային խումբէն:

ՌՈՆԱԼՏԻՆԻՑ ԴԷՊԻ ՄԱՆՉԵՍԹԸՐ...



Ռոնալտիճիօ

Երոպայի հինգ մեծագոյն ակումբներէն՝ Մանչեսթըր Եունայթըտ, Ռեալ Մատրիտ, Պարսելոնա, Ա. Սէ. Միլան եւ Ինթեր Միլան բաւական մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերեն եւ ոչ մէկ ճիգ կը խնայեն իրենց կապին միացնելու Փարիս Սէն Ժերմէնի պրայիլիցի միջազգային մարզիկ Ռոնալտիճիոն: Ռոնալտիճիոյ գործավարը «Պի. Պի. Սի.»-ի հետ հարցազրոյցի ընթացքին ըսաւ. «Ձեռ գիտեր, թէ ան ուր պիտի մեկնի: Լա յարաբերութիւններ ունենալով Մանչեսթըր Եունայթըտի մարզիչ Ալեքս Ֆերկերընի հետ, կը կարծեմ, որ ան հոն կրնայ մեկնիլ»:

ԱՌԵԹԻՉՍ 60 ՓՈՒԷՅ՝ ԵՐԵՔ ԶԱՉԱՐ ՄԵԹՐԻ ԱՆՈՅԵԱՆ

Վիրնէօվ Տ'Ասքի մէջ (Ֆրանսա) տեղի ունեցած «Կրան փրի 2» աթլետիկ մրցումներէն հապար մէջը վազքի մրցումներուն, անցեալ շաբաթավերջին բրիտանացի ձօ Փուէյ յաջողեցաւ դառնալ ամենէնէն արագ վազողը, արձանագրելով 8 վայրկեան 41" 89 արդիւնք մը, վերջին լիփին գերազանցելով քենիացի Իպպելիա Օշիշին, որ արձանագրեց 8' 45" 97 արդիւնք մը:

ՊԵՔՀԱՄ ՄԵԿՆԵՑԱԻ ՃԱՓՈՆ, ՄԻԱՆԱԼՈՒ... ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏԻ

Քանի մը շաբաթ լուսարձակները իր վրայ կեդրոնացուցած Մանչեսթըր Եունայթըտի միջնապահ Տէյվիտ Պեքհամ ի վերջոյ յայտարարեց, թէ իր կապը պիտի լքէ միանալով Ռեալ Մատրիտի, որուն ունեցած «աստղերը» հետպիտէտէ աւելիով «կը յորդին»:



Պեքհամ իր կնոջ՝ Վիքթորիայի հետ կը ժամանէ Ճափոն

Արդէն իսկ իր կապմէն ներս Ջիննետին Չիտանը, Ռոպերթօ Քարլոսը, Լուիս Ֆիկոն, Ռոնալտին, Ռաուլը - ինչպէ՛ս վերջակէտ դնել - ունեցող Ռեալ Մատրիտ արդեօք ի՞նչ կը հետապնդէ այլ «աստղ» մըն ալ իր կապմէն միացնելով:

Մինչ երոպական շատ մը ակումբներ տնտեսական բաւական նեղ կացութեան մատնուած են եւ դիպուած հսկայական պարտքերու տակ, անդին Ռեալ Մատրիտ կը շարունակէ դրամ «բափել»...

28 տարեկան Պեքհամ, որ իր կնոջ՝ Վիքթորիայի հետ երէկ մեկնեցաւ Ճափոն, ուր առաջին անգամ ըլլալով պիտի կրէ Ռեալ Մատրիտի շապիկը, նկատի ունենալով, որ Ռեալ Մատրիտ ամրան ձեռնարկած է ասիական շրջապտոյտի մը: Մանչեսթըր Եունայթըտի պատասխանատուները յայտարարեցին, որ Պեքհամի համար գրանձուած գումարը՝ 35 միլիոն էուրօ, պիտի յատկացուի նոր մարզիկներով օժտելու համար խումբը:



Ռեալ Մատրիտի աստղերուն խմբակցարը

Մանչեսթըրի խմբապետ Ռոյ Քին Պեքհամի մեկնումին անդրադառնալով ըսաւ, թէ խումբը պիտի չկաղայ, որովհետեւ մարզիչ Ալեքս Ֆերկերըն պիտի շարունակէ իր յաջողութիւնները արձանագրել, նկատի ունենալով, որ ան 11 տարուան ընթացքին յաջողեցաւ 8 անգամ շահիլ Անգլիոյ ախոյեանութիւնը:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԱՐՔԷՆ

Թեւեւ մէջ (Իրան) տեղի ունեցած թերուանտի միջազգային մրցաշարքին աւարտին, Հայաստանի հաւաքականը յաջողեցաւ գրաւել ընդհանուր դասաւորման երրորդ դիրքը, շահելով մէկ ոսկի եւ մէկ արծաթ մետալ: Ոսկի մետալին տիրացաւ Վարդան Վարդանեան, իսկ արծաթ մետալին՝ Վիգէն Սարգսեան:

Նշենք, որ 2008ի Ռղիմպիականին, առաջին անգամ ըլլալով թերուանտին նկատի պիտի առնուի, իբրեւ Ռղիմպիականի մարզաձեւ:

ՅՈՒՆԻՍ 22ին, Երեւանի մէջ տեղի պիտի ունենայ Միջազգային Ռղիմպիականի օրերուն նուիրուած ասանդակային վազքի մրցումը, որուն կրնան մասնակցիլ բոլոր փափաքողները, յայտարարեց Հայաստանի աթլետիկ ֆետերասիոնը:

Լաւագոյն աթլետները պիտի պարգեւատրուին մրցանակներով եւ Միջազգային Ռղիմպիականի կոմիտէի յատուկ յուշանուէրներով:

ՅՈՒՆԻՍ 23ին մէջ տեղի ունեցող ճատրակի միջազգային մրցաշարքին հայրենի վարպետ Վլատիմիր Յակոբեան ձախող ձեւով սկսաւ մրցաշարքը, կրելով յաջողական երեք պարտութիւն: Նախապէս ան նմանօրինակ մեկնարկ չէ ունեցած:

ԵՐԷԿ Երեւանէն Պուրթէջ մեկնեցաւ բոնցքամարտի պատանիներու Հայաստանի հաւաքականը, մասնակցելու համար աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին:

Ռումանիոյ մէջ տեղի ունենալիք այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն վեց մարզիկներ: Հաւաքականի մարզիչն է Տետիա Ալեքսանեան: Անոնց կ'ընկերակցի նաեւ միջազգային իրարարար Սուրէն Ղապարեան, որ վստահաբար պիտի վարէ որոշ մրցումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆուտբոլի ազգային խումբին եւ պոլիցերիական «Եանկ Պոյ» ակումբին մաս կազմող Արթուր Պետրոսեանը յառաջիկայ եղանակին մաս պիտի կապմէ պոլիցերիական այլ ակումբի մը՝ Յիրիլիի:

ՅՈՒՆԻՍ 20ին, Եու. Է. Էֆ. Ա.ի կեդրոնաւեղիին մէջ տեղի պիտի ունենայ «Չէմփիւրնկ Լիկ»-ի եւ Եու. Է. Էֆ. Ա.ի ֆուտբոլի մրցաշարքերուն պտուի մրցումներուն վիճակագրութիւնը:

Հայաստանի երեք ներկայացուցիչներ՝ Փիւնիկ, Բանանց եւ Շիրակ իրենց կարգին անհամբեր են վիճակագրութեան արդիւնքներով:

«ԻՆԹԵՐՈՒՅՕ» մրցաշարքին իր մասնակցութիւնը բերող Կոտայք պիտի ձակաւորի չէի Պոնս խումբին դէմ: Երթի մրցումը տեղի պիտի ունենայ Յունիս 21ին, իսկ դարձի մրցումը՝ Յունիս 28ին:

ՍԵՊՏԵՄԲԵՐ 6ին տեղի ունենալիք Հայաստան - Յունաստան մրցումին (Եւրօ - 2004ի պտու) պատրաստուելու համար, Օգոստոս ամսուան ընթացքին Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը, Երեւանի մէջ բարեկամական մրցում մը պիտի կատարէ Տաճիկիստանի դէմ: Հիւր կապմէն երթուղարձի ծախսերը պիտի հոգայ Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնը:

ՅՈՒՆԻՍ 25ԻՆ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Յառաջիկայ Յունիս 25ին, Երեւանի մէջ տեղի կ'ունենայ Համահայկական Յրդ խաղերուն վիճակագրութիւնը: Յառաջիկայ Օգոստոսին տեղի ունենալիք այդ խաղերուն նկատի առնուած են 11 տարբեր տեսակի մարզաձեւեր:

Համահայկական Յրդ մարզախաղերուն փոխնախագահ Աշոտ Մելիք Շահնապարեանի համաձայն, այս տարի որոշ փոփոխութիւններ տեղի պիտի ունենան, նկատի ունենալով, որ Հայաստանի կառավարութիւնը վերակազմուած է եւ այդ խաղերը տեղի պիտի ունենան Հայաստանի կառավարութեան հովանաւորութեամբ:

ԱՄԱՎ ԵՐԶԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Սիրով կը հրաւիրուիք ներկայ գտնուելու ՍԵՏԻ ՏԱՆԻ ԿՐԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՏՈՒԹԱՆ ԴՊՐԵՎԱՆԵՐ Շ. Գ. (2002-2003) տարեշրջանի ամավերջի հանդիսութեան եւ վկայականաց բաշխման արարողութեան, որ տեղի պիտի ունենայ ընդ նախագահութեամբ՝

Ս. ԱԹՈՂՈՅՍ ԿԵՏԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ուրբաթ, 20 Յունիս 2003, երեկոյեան ժամը 6:00ին, Դպրեվանքի բակին մէջ, Պիքեթայա:

ՇՐԱԲԵՐ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ

ՄՈՒՃԱՅԻՏԻՆ ԽԱԼԸՐԻ ԳԾՈՎ

ԻՐԱՆ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ՈՒՍՇԻՆԿԹԸՆԻ ՓԱՐԻՉԻ ՕՐԻՆԱԿԻՆ ՀԵՏԵՒԼ

Իրանի նախագահ Մոհամեդ Խաթամի էրէկ Ֆրանսային պահանջած է Իրանի յանձնել Մուճաիտին խալք խմբակին Ֆրանսայի մէջ ձերբակալուած անդամները, ինչպէս նաեւ ան Ուաշինգթոնի յայտնած է, որ պէտք է հետեւի Փարիզի օրինակին՝ Իրաքի մէջ խմբակին անդամները ձերբակալելով:

Ան մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ նկատի ունենալով, որ Իրան ԿՈՉ դարձած է այդ անձերուն արարքներուն, անոնք պէտք է դատուին այն երկրին մէջ, ուր գործած են «իրենց ոճիրներուն մեծամասնութիւնը»:

Խաթամի ըսած է, որ խմբակին դէմ նման գործողութեան մը դիմելով, Ֆրանսա «յարգած է իր պատասխանատուութիւնը՝ իբրեւ մէկ անդամը Եւրոպական Միութեան, որ խմբակը ահաբեկչական հոշակած է»:

«Սակայն եթէ կ'ուզենք ահաբեկչութեան դէմ պայքարիլ, ապա պայքարը ընդհանրական պէտք է ըլլայ», աւելցուցած է ան, թիրախ ունենալով Մ. Նահանգները:

2 ԿԻՆԵՐ ԻՐԵՆԸ ԶԻՐԵՆԸ ԿԸ ՇՐԿԻՉԵՆ

Մինչ այդ, Փարիզի մէջ 2 կիներ էրէկ իրենք զիրենք հրկիւած են իբրեւ բողոք իրանեան Մուճաիտին խալք խմբակին դէմ անուամբ քայլերուն դէմ: Կիները հիւանդանոց փոխադրուած են եւ անոնցմէ մէկը աւելի ուշ մահացած է:

Դէպքերը պատահած են ֆրանսական ներքին գաղտնի սպասարկութեան (ՏԵ. Ըս. ԹԵ.) Փարիզի գրասենեակներուն մօտ, ուր շուրջ 50 ցուցարարներ պահանջած են խմբակին ղեկավարին կոտորելու Մարիամ Ռաճաիի պատ արձակումը:

Խմբակը էրէկ հաղորդագրութեան մէջ ամբաստանած է ֆրանսական ոստիկանութիւնը՝ Ֆրանսայի մէջ իր գործունէութիւնը ձգելու նպատակով վայրագութեանց դիմած ըլլալու յանցանքով, պահանջելով ձերբակալելու նպատ արձակումը:

Աւելի քան 1200 ոստիկաններ էրէքշաբթի արեւածագին Փարիզի հիւսիսարեւմտեան արտարձաններուն մէջ 13 վայրերու վրայ յարձակումներ գործած են, ձերբակալելով աւելի քան 165 անձեր (որոնց 26ը էրէկ տակաւին հարցաքննութիւններու կ'ենթարկուէին) եւ գրաւելով մեծ գումարներ ու համակարգչային սարքեր:

Իրանցի Քաղաքական Գաղթականներու Պաշտպանութեան Միջազգային Յանձնախումբին մէկ քանբերը էրէկ պոլիցապետացած է, որ Կինեայի խմբակին դէմ ֆրանսական իշխանութիւններուն ճնշումներուն դէմ բողոքները հետպիտէտ աւելի թափ պիտի ստանան եւ «աւելի ու աւելի արմատական» պիտի դառնան:

Մուճաիտին խալք խմբակին հետեւորդներին մէկը ըսած է, թէ Լոնտոնի մէջ իրանցի մը «իր կեանքը հրկիւած է, աշխարհէն պահանջելու համար, որ դատապարտէ ֆրանսական ոստիկանութեան եւ կառավարութեան արարքները»:

Լոնտոնի մէջ ֆրանսական դեսպանատան առջեւ 38 տարեկան մարդ մը էրէքշաբթի գիշեր փորձած է ինքզինք սայրել: Ան նաեւ էրէկ հիւանդանոցի մը մէջ կը դարձնուէր:

Չուիցերլանդի մէջ այլ տղամարդ մը էրէկ ֆրանսական դեսպանատան առջեւ փորձած է ինքզինք սայրել, սակայն ոստիկանութիւնը արգիլած է անոր արարքը:

Պէճիքային եւ Հոլանտային հետեւորդներ էրէկ միացած են ֆրանսական Օվէր-Միր-Ուալ քաղաքին մէջ ցուցարարներու: Քաղաքին մէջ կը գտնուի քաղաքական ընդդիմադիր Իրանի Դիմադրութեան Ազգային խորհուրդին եւրոպական կեդրոնատեղիին:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԻՃԱՆՈՒԹԵԱՆՑ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՆԸ

Ֆրանսայի ներքին գործոց նախարար Նիքոլա Սարքոչի էրէքշաբթի օր գործողութիւնները արդարացուցած էր, յայտնելով, թէ Մուճաիտին խալք խմբակը, որ Մ. Նահանգներու, Եւրոպական Միութեան եւ Իրանի կողմէ ահաբեկչական խմբակ մը կը նկատուի, Ֆրանսան իբրեւ կեդրոն կը գործածէ իր գործունէութիւններուն համար:

Կառավարութեան քանբերը՝ Ժան - Ֆրանսուա Քոփ էրէկ յաւելելով քաղաքացիական տուած է, ըսելով, որ գաղտնի սպասարկութիւնները «ճշգրիտ տեղեկութիւններ ունէին կազմակերպութեան գործունէութիւններուն կարգաւորման մասին»:

«Երէկուան գործողութիւնը յայտնաբերեց այս կազմակերպութեան ապօրինի եւ վտանգաւոր գործունէութիւնները», ըսած է ան:

Արդարադատութեան մարզի պաշտօնատարներ յայտնած են, որ քննութիւններ կը տարուին գտնելու համար, թէ խմբակը «ահաբեկչական գործունէութեանց ֆինանսատրման» մասնակից է կամ ոչ:

Սակայն մեկնաբաններ եւ խմբագիրներ հարց տուած են, թէ գործողութիւնը ինչու էրէքշաբթի օր տեղի ունեցած է:

Անիկա կատարուած է մինչ Իրանի կառավարութիւնը ներքին ճակատի վրայ բարեկարգչականներու կողմէ վարչակարգին դէմ բողոքի ցույցեր եւ արտաքին ճակատի վրայ միջազգային համայնքին կողմէ պահանջներ կը դիմադրուէ՝ երկրին կորիզային ծրագիրը բանալու միջազգային քննիչներու առջեւ:

Ըստ իրանցի քաղաքական գիտնական Տարիուզ Ապտալիի, գլխաւոր հարցը կորիզայինն է: «Ֆրանսա կ'ուզէ, որ Թեհրան կորիզային պէնքերու տարածումը արգիլող համաձայնագիրին կցուած փրոթոգոլ մը ստորագրէ» եւ այդ պատճառով է, որ անիկա Մուճաիտինի դէմ գործողութեան դիմած է:

«Ըր Ֆիկարո» օրաթերթը (պահպանողական) ողջունած է յարձակումները, ըսելով, թէ անտրամաբանական դարձած էր «պատասխան տալ կազմակերպութեան մը, որ կ'ուզէ պէնքի ուժով տապալել կառավարութիւնը, որուն հետ Ֆրանսա, ի տարբերութիւն Մ. Նահանգներու, իր յաւանքները կ'ընէ շինիչ տիպով մը ունենալու համար»:

Սակայն, նշած է թերթը, Ֆրանսա «իրաւունք ունի փոխարէնը Թեհրանէն ձեռք մը ակնկալելու»:

ԻՐԱՆ

ԽԱՐԵՄԻ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸՂԼԱԸՈՎ ԿՎՐՏԱՅԱՅՏՈՒԻ ՑՈՅՑԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Իրանի քաղաքացիական պահակաւոր զորքի ղեկավար Մոհամեդ Խաթամի էրէկ պաշտպանած է իրանցիներուն ցուցարարները, որոնք իրաւունքը, դատապարտելով բրտութիւնները: Ըլլան անոնք ցուցարարներուն կամ իսլամական օմարա յալալի մարտի խմբակներուն կողմէ:

«Եթէ ժողովրդավարութիւն կ'ուզենք, ապա պէտք է նման ցուցարարական ընդունիչք», ըսած է նախագահը, առաջին անգամ ըլլալով հակադարձելով վարչակարգին դէմ 8 յաջորդական գիշերներու ցուցարարները:

Իրանեան լրատուագրութիւններ էրէկ հաղորդած են, թէ առաջին 170 հոգի ձերբակալուած են Թեհրանի եւ այլ քաղաքներու մէջ՝ էրէքշաբթի գիշեր տեղի ունեցած բախումներու ընթացքին, մինչ վարչակարգին դէմ բողոքի ցուցարարները գիշերը ըլլալով կը շարունակուէին:

ԿՈՐԻՉԱՅԻՆ ԶԵՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐԻՆ ԱՆՉՈՒԹԵԱՄԸ

Միւս կողմէ, նախագահը ըսած է, թէ Իրան ՄԱԿի քննիչներուն կողմէ իր կորիզային ծրագիրին աւելի թափանցիկութիւն պիտի ընդունի միայն եթէ կորիզային պէնքերու տարածումը արգիլող համաձայնագիրը (Էն. Փ. Թ.) ստորագրած այլ երկիրներ ընդունին Իրանի թեքնիք օմարա կազմակերպութիւնները:

ԻՐԱՔԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԹԵ ՏԱՐԲԵՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒ ՄԷՋ ԱՐԻՆԱԼԻ ԽՈՌՎՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ ԱՆԸՆԴՄԷՋ

Ամերիկացի երկու զինուորներ եւ իրաքցի երկու ցուցարարներ սպանուեցան էրէկ Իրաքի մայրաքաղաք Պաղատի մէջ տեղի ունեցած խռովութիւններու ընթացքին: Ամերիկեան ուժերը կրակ բացին իրաքցի նախկին զինուորներու վրայ, որոնք բողոքի ցույց մը կազմակերպած էին պահանջելու համար իրենց ամսականները: Պաղատի անկումէն ի վեր, առաջին անգամ ըլլալով ամերիկեան ուժեր կրակ կը բանալին ցուցարարներու վրայ: Երէկուան ցույցին մասնակցած էին աւելի քան երեք հարիւր իրաքցիներ, որոնք քարեր նետեցին ամերիկացի զինուորներուն վրայ:



Չինուորները հակադարձած են կրակ բանալով եւ երկու ցուցարար սպանուելով: Ամերիկեան ուժերը կրակ կը բանալին ցուցարարներու վրայ:

Իրաքի մէջ: Այլ միջադէպով, որ տեղի ունեցաւ էրէկ, իրաքցի մը ծանրօրէն վիրաւորուեցաւ, երբ ամերիկեան ուժեր կրակ բացին անոր ինքնաշարժին վրայ Ֆայլուճայի մէջ, Պաղատի արեւմուտքը:

Մինչ այդ ամերիկեան ուժերը կը շարունակէին «Անապատի Կարիճ» գործողութիւնը, որ ուղղուած է Սատամի հետեւորդներուն դէմ: Միւս կողմէ, Իրաքի մէջ հաստատուած ամերիկեան իշխանութիւնը ձեռնարկած է դատական կառոյցը քաղաքացիներու աշխատանքին՝ դատարաններէն հեռացնելու համար Սատամի հետ կապեր ունեցող դատաւորները:

ԹՈՒՐԿԻԱ ԵՐԷԿ փակեց Իրաքի հետ սահմանային անցքը արտօսելով երթելիք միայն այն ինքնաշարժներուն եւ փոխադրակառքներուն, որոնք օժանդակութիւն կը փոխադրեն ամերիկեան ուժերուն: Արտաքին գործոց նախարարութիւնը հաստատեց, որ անցքը մասամբ փակուած է իրաքեան կողմը տիրող կացութեան պատճառով:

ԼՈՆՏՈՆ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԻՐԱՆԻ ՀԵՏ «ԱՆԿԵՂԾ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ»Ը ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ

Կ'ԸՍԵ ԹՈՆԻ ՊԼԵՐ

ԼՈՆՏՈՆ, 18 (ԱՅՓ).- Բրիտանիոյ վարչապետ Թոնի Գլէյըր յայտարարեց, որ Լոնտոն պիտի շարունակէ «անկեղծ եւ ճակատագրական» երկխօսութիւնը Իրանի եւ Սուրիոյ հետ՝ ահաբեկչութեան եւ հաւաքական բնաջնջումի պէնքերու սպանալիքին մասին: Պլէր, որ կը խօսէր խորհրդարանին դիմաց, ըսաւ, որ եթէ Իրան եւ Սուրիա վերատեսութեան չենթարկեն իրենց կեցուածքը ահաբեկչութեան հանդէպ, Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը պիտի վտանգուի: Ան ըսաւ նաեւ, որ հաւաքական քանդումի պէնքերուն հանդէպ կեցուածքս ալ եթէ չփոխուի՝ աշխարհը նուազ ապահով վայր մը կը դառնայ:

Պլէր շեշտեց, որ Միացեալ Նահանգներ Իրանի եւ Սուրիոյ դէմ պատերազմի որեւէ ծրագիր չեն ներկայացուցած Բրիտանիոյ: Բայցեւայնպէս, Ուաշինգթոն փոխանցած է լուրջ ու վտանգաւոր մտահոգութիւններ իշեալ երկիրներուն մասին:

ՄԵՔՔԷԻ ՄԷՋ ԶԵՐԲԱԿԼԵԱԼ ՆԵՐԸ «ԲԱՅԻՏԱ»Ի ԱՆԴԱՄ ԵՆ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՄԵՌՏԱԿԱՆ ԱՐԱՐԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ

ՌԻՍ, 18 (ԱՅՓ).- Մեքքէի մէջ անցեալ շաբաթավերջին սպանուած կամ ձերբակալուած 17 կազմակերպի ահաբեկիչները Ռուսաւ Պըն Լատիմի «Քայիտա» ցանցին անդամներ են, յայտնած է Մէրտական Արաբիոյ ներքին գործոց նախարար Նայէֆ Պըն Ապտիւլ Ալիյ իշխանը Չորեքշաբթի օր:

Շաբաթ գիշեր սկսած գործողութեան ընթացքին, 5 կազմակերպիչներ սպանուած են եւ 12 ուրիշներ ձերբակալուած, ըսած է ներքին գործոց նախարարութիւնը էրէքշաբթի գիշեր: Մնոնց էօթն՝ սէնտցի, երեքը՝ չաւոցի, մէկը՝ եգիպտացի եւ մեկուն ինքնաշարժի անձնակազմ, ըստ նախարարութեան:

Անիկա նախապէս յայտնած էր, թէ խմբակը «օտարախոս» յարձակում մը կը պատրաստէր եւ թէ այն յարկաբաժինը, որ անոր անդամները կ'ապրէին, «սկանուած էր ու պայթելու պատրաստ»:

Միւս կողմէ, Նայէֆ իշխանը յայտնած է, որ ահաբեկիչներուն կողմէ երկրին մէջ յաւելալ յարձակումներու կարելիութիւնը նուազած է, «սակայն կարելի չէ բացարձակապէս վստահ ըլլալ»:

ԱՅՏՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ...

Շարունակուած Ա. ԷջէԳ

հանդերձ ծրագիրին այդ բաժինը ամբողջութեամբ կ'արտայայտէ Հ. Յ. Դ. ի մտեցումները: Այս գծով ծրագիրը շեշտած է, թէ փտածութեան դէմ պայքարը պէտք է նկատուի կառավարութեան գործունէութեան առաջնահերթութիւններէն մէկը եւ թէ անիկա պէտք է իրականացուի հիմնականօրէն ընկերային, տնտեսական, պետական կառավարման համակարգերու բարեփոխման ընդմէջէն:

Հ. Յ. Դ. ի պնդումներուն վրայ պիտի որդեգրուին փտածութեան դէմ պայքարի յստակ ուղղութիւնները:

Հանրապետական Կուսակցութեան խորհուրդի անդամ, Ազգային Ժողովի պատգամաւոր Գայուստ Սահակեան ծրագիրը նկատած է իրատեսական, աւելցնելով, որ նախընտրական քաղաքացիական ընթացքին «ճշգրտող խոստումները» նկատի չեն առնուած: Ինչ կը վերաբերի ծրագրի ուղղութեան, ապա ըստ Սահակեանի անիկա աւելի ընկերային խնդիրներու լուծման ուղղուած է, այսուհանդերձ «միաժամանակ օրագիրը աւելի կ'իմաստաւորուի, որովհետեւ արդիւնք է յստակ կարգաւորումներուն»:

Իր կարգին, Օրինաց Երկիր Կուսակցութեան Ազգային Ժողովի խմբակցութեան ղեկավար Սամուէլ Բալասանեան ծրագիրը նկատած է անբողջական եւ իրատեսական: Ըստ Բալասանեանի, ծրագիրը կրնայ լուծել ընկերային բազմաթիւ խնդիրներ: